

ՅԱ. ԲԵՐՍԸ

14  
ՏԱՐԻ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ  
ԶԵՂԱՆՆԵՐՈՒՄ



ՈՒՆՏԵՐՈՒՄ

9(498)

F-55

ՊԵՏՂԱՏ

ՄԱՍԻՉԻՆ

14

ՀԱՅԿ

ԿԵՆՏՐԱԼԻ  
ՍՊՈՐՏԻՎՆԵՐԻՄ



ՍՊՈՐՏԻՎՆԵՐԻՄ



ՀԱՅԿ

9(498)

F-55

ս6.

Հ.Բ. ԲԵՐՄԱՆ

5 OCT 2011

14 ՏԱՐԻ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ  
ԶՆԴԱՆՆԵՐՈՒՄ ՈՒ  
ԲԱՆՏԵՐՈՒՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մեծ պատերազմի» համար կատաղորեն կիրառվող պատրաստության մեջ գերմանական Փաշիզմը լուրջ ուշադրություն է նվիրում Ռուսինիային: Համաշխարհային պատերազմի հրձիգները հսկայական ջանքեր են գործ դնում՝ Ռուսինիային իր հումքային ուսուցանելով իրենց ազդեցության տակ քաշելու համար: Գերմանիայի Փաշիստական մամուլը քաշիցս հայտարարել է, վոր գերմանական իմպերիալիզմի ռազմական նպատակներն իրագործելու համար վերջինին ողի չափ անհրաժեշտ են ռուսինական ցորենն ու նավթը:

Իր ավազակային մեծ պլանները կատարելու նպատակով գերմանական Փաշիզմը մտադիր է Ռուսինիան—բազմազգի այդ յերկիրը— դարձնել վասսալ պետություն և ծվատել այն՝ հատուցելու համար իր դաշնակիցներին (Հունգարիա, Բուլղարիա, և այլն): Գերմանական «Ֆյուրերները» («առաջնորդները») այսպես են մտադիր վարվելու ռուսինական պետական սահմանների հետ, վորպիսի սահմանները նրանք ձգտում են ստանալու «վարկով»— ԽՍՀՄ և այլ պետությունների վրա հարձակվելու համար:

Ռուսինիայի կոմունիստական կուսակցության գլխավորությամբ հակաֆաշիստական կազմակերպու-



2785  
40  
9

թյունները ժամանակին մերկացրին գերմանական ֆաշիզմի «նուսխական հուշերը»: Նրանք իրենց մարտական դրոշի վրա գրեցին հակաֆաշիստական ժողովրդական ճակատ ստեղծելու պահանջը՝ պայքարելու համար հանուն խաղաղության, հացի և ազատության:

Ծանր և զոհառատ ե հակաֆաշիստական պայքարը Ռուսիայում: Փաշիստական գործակալները Բեռլինից ստացած ցուցումներով որեցոր ուժեղացնում են արյունոտ տեռորը: Առանձին հակաֆաշիստներին անկյունից սպանելուց նրանք անցնում են բանվորական կազմակերպությունների, բանվորական տների ու ժողովների վրա գործած բաց հարձակումների:

Փաշիստական կազմակերպություններն ուժեղացնում են տեռորը յերկրի բոլոր դեմոկրատական տարրերի դեմ: Ռուսիական կապույտ շապկավորների շուկատները բացահայտ կերպով հարձակվում են բանվոր հակաֆաշիստների վրա, քարշ են տալիս նրանց իրենց «կապույտ տները», վորտեղ յենթարկում են ամեն տեսակ ծաղրանքի ու տանջանքների: Նրանք արշավներ են կազմակերպում ազգային գյուղացիական կուսակցություն ժողովների դեմ, իսկ գավառներում սպանում են այդ կուսակցության ղեկավարներին և ակտիվիստներին:

Մի շարք տարիների ընթացքում ֆաշիստական բանդիտներն ու մարդասպանները փաստորեն անպատիժ կերպով կատարում են իրենց զազրելի գործերը:

Ռուսիական ֆաշիստներն ու Բեռլինի նրանց հովանավորները վերջերս միանգամայն սանձարձակ դարձան: Նրանք փորձեցին գրավել իշխանությունը:

1937 թ. ապրիլի սկզբներին հայտաբերվեց «Յերկաթե գվարդիայի» ֆաշիստական կազմակերպություն ղավադրությունը, վորին ակտիվ մասնակցություն են ցույց տվել ռուսիական արքայազն Նիկոլայը և ռազմական վերնախավի մի վորոշ մասը:

Նիկոլայն ինքնակամ կերպով իրեն հայտարարեց ռուսիական բանակի գլխավոր հրամանատար, վորպեսզի այնուհետև յերկրում հաստատի ռազմաֆաշիստական դիկտատուրա:

Կառավարությունն անմիջապես ղրկեց Նիկոլային նրա բոլոր կոչումներից և նրան յենթարկեց «տընային կալանքի»:

Ապրիլի կեսին «յերկաթե գվարդիականները» փորձեցին ուժով ադատելու Նիկոլային: Մոտովությունը կանխվեց միայն ամենավերջին ըոպյեյին: Չնայած դրան, կառավարությունն սկսեց բանակցել «Յերկաթե գվարդիայի» ղեկավարների հետ՝ «մթնոլորտը խաղաղեցնելու» մասին:

Կառավարությունը վարում ե այնպիսի քաղաքականություն, վորը շատ քիչ ե տարբերվում այն ուղղությունից, ինչպիսին պահանջում են ռուսիական ֆաշիստներն ու Գեստապոյի նրանց տերերը:

Ռուսիական իշխանությունը բացառիկ մեղմություն ու ներողամտություն ե ցուցաբերում դեպի ֆաշիստական տեռորիստներն ու շարդարարները:

Միևնույն ժամանակ պետական ապարատն անխընա գործադրում ե բռնություն և տեռորի ուժիմ հակաֆաշիստների դեմ: Ռուսիայի բանտերն ու կալանատները լեփ-լեցուն են քաղաքական կալանավորներով: Վերջին ամիսների ընթացքում ամբող

յերկրում տեղի յեն ունենում հակաֆաշիստների մաս-  
սայական դատավարություններ:

Հենց միայն Յասսիի ղինվորական դատարանում  
պաշտոնական տվյալների համաձայն 1936 թ. տեղի  
յե ունեցել 60 դատավարություն 600 հակաֆաշիստի  
դեմ: Ներկայումս այդ ղինվորական դատարանն ունի  
ևս 200 նման դատավարություն:

1936 թվին 10 տարվա բանտարկության դատա-  
պարտվեց հերոս-կին Աննա Պառլեբերը, — ֆաշիզմի  
դեմ հանրածանոթ մարտնչողը:

Ռուսիայի լաչն մասսաները, ազգային գյուղա-  
ցիական և առանձնապես սոցիալ-դեմոկրատական կու-  
սակցության շարքային անդամները ֆաշիզմի դեմ  
մղվող պայքարի մեջ են մտնում ժողովրդական ճա-  
կատի գրոշի տակ, ճակատի, վորի իսկական կազմա-  
կերպիչն ու վոգեչնչողը հանդիսանում ե Ռուսիայի  
հերոսական կոմկուսակցությունը:

Հակառակ մասսաների տրամադրությունների ու  
պահանջների՝ ազգային գյուղացիական կուսակցու-  
թյան և ուսմիական սոցիալ-դեմոկրատիայի ղեկա-  
վարները համառորեն սաբոտաժի յեն յենթարկում  
միասնական պրոլետարական և ժողովրդական հակա-  
ֆաշիստական ճակատ ստեղծելու գործը:

Չնայած բոլոր դժվարություններին ու խոչըն-  
դոտներին, որեցոր աճում և ընդարձակվում ե պայ-  
քարը՝ Ռուսիայում հակաֆաշիստական ժողովրդա-  
կան ճակատ կազմակերպելու համար:

Մասսաների հակաֆաշիստական շարժման ան-  
խզելի բաղադրիչ մասն ե հանդիսանում պայքարը՝  
ուսմիական հազարավոր քաղկալանավորների, ֆա-

շիզմի դեմ ախտիվ մարտնչողների ազատագրման հա-  
մար, վորոնք տառապում են Ռուսիայի բանտերում  
ու զնդաններում:

Ընթերցողի ուշադրությանը հանձնարարվող՝  
ընկ. Յա. Բերմանի այս գրքուկը պարզ և անպաճույճ  
ձևով պատմում ե հեղինակի տանջանքների և ապ-  
րուհիների մասին, մի հեղինակի, վորն իր կյանքի 14  
տարին անց ե կացրել ուսմիական բանտերում, «ի  
լրումն» 8-ամյա տաժանքի, վոր նա կրել ե ցարական  
միահեծանության որոք Ռուսաստանում:

Գրքուկը կոչ ե անում ախտիվ մասնակցելու մի-  
ջազգային համերաշխության շարժմանը և ֆաշիս-  
տական տեռորի ու պատերազմի հրձիգների դեմ  
մղվող պայքարին:

I. Գ Լ Ո Ւ Խ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒՄ: ԴԱՏ ՈՒ ԴԱՏԱՎՃՈՒ

1920 թվի հոկտեմբերյան որերի Կիշինեվը կանգնում է աչքիս առաջ այնպես, ինչպես այդ այսօր լինի: Ռուսինիայի ապագա ղեկավարը, կառավարութան գլուխ, գեներալ Ավերեսկուն բռնել էր բանվոր դասակարգի քաղաքական ու տնտեսական նվաճումները վերացնելու ուղին: Վրա հասավ պրոլետարիատի և բոլոր աշխատավորական մասսաների կատաղի հալածանքի ժամանակաշրջանը:

Բանվոր դասակարգի ճնշման տակ սոցիալիստական կուսակցութան և պրոֆմիությունների պարագլուխներն առաջարկեցին գեներալ Ավերեսկուն վտարնազուլթուն չանել աշխատավորների իրավունքների դեմ:

Կառավարությունը պատասխանեց մերժումով: Բանվորական մասսաներն ու բոլոր աշխատավորները վճռեցին առանց մարտի չզիջել իրենց զիբերը: 1920 թվի հոկտեմբերի 21-ին ամբողջ Ռուսինիայում հայտարարարվեց ընդհանուր գործադուլ:

Կիշինեվում գործադուլը հենց սկզբից հեղափո-

խական բնույթ ստացաւ: Յերբ սիգուրանցալի (պահնորդական բաժնի) ագենտներն ստիպեցին տրամվայի վագոնավարներին դուրս գալ դեպուլից, բանվոր ցուցարարները կանգնեցրին և շուռ տվին վագոնները: Կիշինեվի գլխավոր Ալեքսանդրյան փողոցում և պրոֆմիուսթյան շենքում տեղի էյին ունենում գործադուլավոր բանվորների փոթորկալի ժողովներ: Գործադուլ ևլին արել բոլոր կարևորագույն ձեռնարկությունների, — փոերի, ջրմուղի, ելեկտրոգործարանների, տրամվայի դեպոների, — բանվորները: Յերբ Ալեքսանդրյան փողոցում յերևաց զորքերի գլխավոր հրամանատար դեներալ Պոպովիչին և փորձեց համոզել գործադուլավորներին, վոր նրանք ցրվեն, բանվորներից մեկը դռնեց նրան. «Այստեղ հրամայում եմ յես և վոչ թե դուք: Միայն վոստիկանության ու հրդեհաշեղ մասերի ոգնությամբ հաջողվեց ցրել գործադուլավորների միտինգները փողոցում և պրոֆմիուսթյան շենքում:

Ամբողջ քաղաքում սկսվեցին մասսայական ձերբակալություններ:

Սիգուրանցիայի գործակալներն աջ ու ձախ բռնում էյին բոլորին, ովքեր վորևե պատճառով նրանց քաղաքականապես անբարեհույս էյին թվում:

Յես այդ ժամանակ անլեգալ աշխատանքով գտնվում էյի Կիշինեվում: Հոկտեմբերի 28-ին ինձ բռնեցին Կիշինեվի կամրջի մոտ և կալանավորեցին:

Սիգուրանցներն իմ դեմ հանցանքի անմիջական փաստանշան չուներին: Նրանց ալգպիսի փաստանշան չհաջողվեց ստանալ վոչ տանջանքներով, վոչ ձեռնով: Բայց յես բանվոր էյի, ինձ կասկածում էյին բոլշեվիկ-

մի մեջ, — և այդ բավական էր իմ դեմ մեղադրանք հորինելու համար:

Սկզբում ինձ ուղարկեցին Բուխարեստ, վորտեղ հուլս ունեյին ցուցմունքներ ստանալու ինձանից: Յերբ այդ չհաջողվեց, ինձ կրկին Կիշինեվ փոխադրեցին և այստեղ Կիշինեվի սիգուրանցիայի նկուղում ինձ նորից յենթարկեցին ձեռի ու խոշտանգումների: Այդտեղից ինձ դուրս էյին բերել ուշագնաց դրությամբ, բայց և այնպես դահիճներին չհաջողվեց ինձանից կորզել և վոչ մի խոսք:

Զինվորական դատը, վորին յենթարկեցին ինձ, տեեց յերկու որ: Այդ մի կատակերգություն էր, — ամեն ինչ կանխորոշված էր վաղորդ: Դատավճիռը հայտարարում էր՝ մահապատիժ պետության անվրտանգության դեմ գործած հանցագործության համար: Այդ դատավճիռը հակասում էր մինչև իսկ Բեսարաբիայում գուլություն ունեցող որենքներին, բայց յես գիտեյի, վոր այդ յերկրում աշխատավորները չեն կարող հույս ունենալ արդարության և որինակալության վրա և պատրաստ էյի վատթարագույնին:

Յեվ անա անցնում են որեր, շաքաթներ, ամիսներ... Ամեն որ կարող էր ի կատար ածվել մահապատիժը, ամեն գիշեր ինձ կարող էյին տանել գնդակահարելու: Դասակարգային թշնամուց յես վոչ մի գթություն չէյի սպասում և պատրաստ էլի մահվան:

Ալգպես էլ կլինեիր այդ... Բայց հանգիստ չեր գինվորական այն բանտի պատերի մյուս կողմում, վորի կազմատներում յես սպասում էյի դատավճիռն ի կատար ածելուն: Աշխատավոր մասսաների անեղ բողոքները կասեցրին դահճի՝ իմ դեմ բարձրացրած ձեռքը:

1921 թվի վերջում ինձ հայտնեցին, վոր մահա-  
պատիժը փոխարինված է ցմահ տաժանքով:

Յմահ տաժանք: Դանդաղ մահացում: Այդ ուրա-  
խուլթյունը յես չեմ պատճառի թշնամիներին: Յես  
գիտեյի, վոր յես մեռակ չեմ:

Ռուսիներացի տաժանակիր բանտերում յեղածս  
ըլոր տասնչորս տարիների ընթացքում յես ամբողջ  
ժամանակ զգում եյի, վոր անխղիլի շղթայով կապ-  
ված եմ յերկրի աշխատավոր մասսաների հետ: Յես  
գիտեյի, վոր բանտից դուրս տեղի յե ունենում պայ-  
քար: Այդ պայքարի արձագանդները զանազան ուղի-  
ներով թափանցում եյին բանտի վանդակներից ու  
պատերից և հասնում եյին մեզ: Մենք համոզված եյինք,  
վոր այդ պայքարն իր ազդեցությունը կունենա կա-  
լանավորների բախտի վրա:

Այսպես ել յեղավ: Չորս տարի անց, մասսայա-  
կան պայքարի ճնշման տակ իմ ցմահ տաժանքը փո-  
խարինեցին 20 տարվա հարկադիր աշխատանքներով:

1921 թվի ներումը, վոր կիրառվել եր դարձյալ  
մասսաների ճնշման տակ, կրճատեց իմ կալանքը  
մինչև 15 տարի, և, վերջապես՝ 1930 թվին այդ ժամ-  
կետը կրճատվեց դարձյալ յերկու տարով:

## II ԳԼՈՒԽ

### ՈԿՆԵԼԵ-ՄԱՐԻ ՏԱՎԱՆԱԿՐԱԿԱՆ ԲԱՆՏՈՒՄ

Յես գիտեյի, վոր ինձ չի վիճակվի տաժանքս  
կրելու Կիշինեվի զինվորական բանտում: Ինձ սպասում  
էր Ռուսիերայի տաժանակրական բանտերով թափա-

ռուսները յերկար ուղի: Թե ինչ եր սպասում ինձ այդ  
բանտերում, յես արդեն գաղափար եյի կադմել սիգու-  
րանցայի զնդաններում և Կիշինեվի բանտի կաղեմատ-  
ներում: Յեվ պատրաստվում եյի համառ պայքարի:

Այդ պայքարն սկսվեց Ռիմսիկ-Վալչեա գավառի  
Ոկնելե-Մարի տաժանակրական բանտում յեղածս հենց  
առաջին որվանից: Այդ գավառում կենտրոնացված են  
Ռուսիական պետութայն խոշոր աղահանքերը: Այդ  
աղահանքերը մշակվում են գլխավորապես տաժանակիր-  
ների ձեռքով:

Շրջապատված լինելով լեռներով և անանցանե-  
լի անտառներով, վորոնք բացառում են կալանավոր-  
ների փախուստի հնարավորությունը, Ոկնելե-Մարի  
բանտը գտեղված է Սոլյանայա լեռան մոտերքում,  
վորտեղ գտնվում են աղահանքերը:

Բանտը—դա մի փոքրիկ, միանգամայն մեկու-  
սացված քաղաք է: Ամեն որ առավոտյան ժամի 6-ին  
այնտեղից ուժեղ պահակի հսկողությամբ դուրս են  
բերում 200—250 քրեական տաժանակիրներ: Կիսա-  
մերկ, մշտական կիսաքաղցից ու ծանր աշխատանքից  
հյուժված՝ նրանք իջնում են հանքերը: Այստեղ, ստո-  
րերկրյա անցքերում, սոսկալի ցրտի ու խոնավության  
մեջ՝ տաժանակիրներից չուրաքանչյուրը հասարակ  
բրիչների (քլունգների) ոգնությամբ 12 ժամվա աշ-  
խատանքի ընթացքում պետք է արդյունահանի առ-  
նվազն 50 կիլոգրամ աղ: Հենց այդտեղ՝ գետնի տակ,  
մաշկը քրքրող աղափոշու մթնոլորտում, կալանավոր-  
ներն ստանում են իրենց կերակուրը: Ով չի վերջաց-  
նում որվա իր «պարտքը», մնում է առանց ճաշի:

Չմեռը կալանավորներն ամիսներով լույսի յերես-



չեն տեսնում, վորովհետև բանտ են վերադառնում ուշ  
յերեկոյան:

Այդ իրոք կատարյալ տաժանակիր աշխատանք ե:  
Ցավում ե տանջված մարմինը, մղկտում են  
ցրտից ու խոնավությունից ձեռքերն ու վոտքերը,  
պտտվում ե գլուխը: Ադի փոշին լցվում ե բերանը,  
քիթն ու ականջները, մտնում ե ձեռքերի ու վոտքե-  
րի քերծվածքների մեջ: Ադի չուրաքահչուր կոշտը  
շողախված ե տաժանակիրների արյունով:

Մարդիկ մեկը մյուսի յետևից կորցնում են գի-  
տակցությունը և ուշքի յեն գալիս վերակացուի մըտ-  
րակի հարվածից, մի դույլ սառը ջրից: Իսկ յերեկո-  
յան վերևում նրանց համար պատրաստված ե լրացու-  
ցիչ պատիժ. ձեռքի ու վոտքի շղթաներ, կարցեր  
(պատժասենյակ), դաժան ծեծ...

Այսպես անցնում են որերն որերի յետևից...  
Հուսահատության հասցված կալանավորները հաճախ  
միակ լեւքը գտնում են ինքնասպանության մեջ:

Կալանավորները մեջ մահացությունն անչափ բարձր  
ե: Մի տարուց հետո արդեն կալանավորները մեծ  
մասամբ հիվանդանում են անբուժելի հիվանդություն-  
ներով, ամենից հաճախ՝ լրիվ կամ մասնակի կուրու-  
թյամբ, վորն արդյունք ե աչքերի թարախային բոր-  
բոքման:

Նման «կյանք» եր, ի հարկե, սպասում և ինձ:  
Բայց յես առաջին քաղաքական կալանավորն եյի Ոկ-  
նելե-Մարում և յես գիտեյի, վոր իմ վաքադծից ե  
կախված վոչ միայն իմ հետագա սեփական վիճակը,  
այլև իմ հետնորդ բաղմաթիվ այլ քաղաքական կա-  
լանավորների ապագան: Այդ պատճառով յես վճռեցի՝

հենց վոր ինձ ստիպեն հանքն իջնել, ամենահամառ  
դիմադրությունը ցույց տալ բանտային իշխանու-  
թյանը:

Բանտը դալուն պես ինձ տեղավորեցին «կարան-  
տինում»: Մակայն չպետք ե կարծել, վոր ուումինա-  
կան բանտում կարանտինը հետապնդում ե սանիտա-  
րական-հիգիենիկ նպատակներ: Կարանտինում նույն-  
պես իշխում ե նույն սոսկալի, անտանելի կեղտը,  
ինչ մնացած ամբողջ բանտում: Կարանտինը բանտի  
նախադուռն ե, վորտեղ կալանավորներին յենթարկում  
են անհամար վիրավորանքների ու ստորացումների,  
անվերջ ծաղրանքի թե բանտային ադմինիստրա-  
ցիայի և թե նրա արբանյակների կողմից, վորոնք բաղ-  
կացած են քրեական հանցագործների տականքներից,  
այսպես կոչվող՝ «բանտային Իվաններից»:

Այստեղ գործում ե կալանավորին կողոպտելու  
նուրբ ձևով մշակված սխտեմ: Յեթե չես ուզում ան-  
ձոռնի ձեռով խուզվել, վճարիր: Յեթե չես ուզում, վոր  
քո հագուստն այրվի ախտահանման վառարանում, նո-  
րից վճարիր: Յեթե քո հագուստը դեռևս մաքուր ե, քեզ  
նշանակում են ամենակեղտոտ աշխատանքի: Իսկ այդ  
աշխատանքից ազատվել կարող ես միայն համապատաս-  
խան հատուցումով: Այսպեսով կալանավորից խլում են  
վերջին կուպեկները, բայց այդ ել նրան չի փրկում հե-  
տագա կորզումներից: Վերջիվերջո՝ նա ստիպված ե լի-  
նում նույն այդ «Իվանին» տալու իր հագուստը և  
փոխարենն ստանալու խղճուկ ցնցոտիներ: Մտածել  
անգամ կարիք չկա ադմինիստրացիային զանգատվելու  
մասին, վորովհետև կալանավորներից կողոպտածի ա-  
ռույծի բաժինը հասնում ե ադմինիստրացիային: Գան-

գատավորին սպասում են նոր տանջանքներ ու ծեծ  
Ընդհանուր առմամբ՝ կարանտինը «քավարան է»,  
վորտեղ ձգտում են կալանավորից հանելու անհնա-  
զանգուլթյան վերջին մնացորդները:

Հինգ որ յես մնացի կարանտինում, իսկ վեցե-  
րորդ որն ինձ առաջարկեցին աղահանքն իջնել կա-  
լանավորների հերթական լսմբի հետ միասին: Հասել  
եր վճռական ըոպեն, վորից կախված էր իմ հետագա  
բախտը...

Յես կտրականապես հրաժարվեցի աղահանքե-  
րում աշխատելուց և տեսակցություն պահանջեցի  
բանտի դիրեկտորի հետ: Դիրեկտորն, ի հարկե, չե-  
կավ ինձ մոտ: Նա իրեն մոտ էլ չկանչեց ինձ: Նրա  
փոխարեն յեկան վերակացուները: Ինձ դաժանորեն  
ծեծեցին և շղթայելով ձեռքի ու վոտքի շղթաներով,  
դցեցին խոնավ ու մութ կարցերը:

Այսպես սկսվեց իմ պայքարը:

Տաղակալի էյին անցնում կարցերում կալանքի-  
որերը: Յես առաջվա պես համառորեն տեսակցություն  
էյի պահանջում դիրեկտորի հետ: Անցավ տասնվեց  
որ: Վերջապես՝ տասնյոթերորդ որը նա յեկավ:

— Ինչո՞ւ յեք հրաժարվում հանքն իջնելուց, —  
հարցրեց նա: — Դուք պետք է հիշեք, վոր դուք ցմահ  
տաժանքի դատապարտված հանցադործ եք: Դուք  
պարտավոր եք առանց առարկության կատարելու  
պետերի բոլոր կարգադրությունները:

— Մխավում եք, — հանգիստ պատասխանեցի լես: —  
Յես քաղաքական կալանավոր եմ, վորին ձեր իշխա-  
նությունը պահում է գերության մեջ: Յեվ դուք չեք

կարող իմ նկատմամբ գործադրել նույն ռեժիմը, ինչ  
քրեյականների նկատմամբ:

Դիրեկտորը կատաղեց իմ պատասխանից:

— Յերկարացնել նրա կալանքը կարցերում  
դարձյալ յերկու ամսով, — գոչեց նա և արագ հեռացավ:  
Կրկին սկսվեցին յերկար որերն ու գիշերները:  
Յեվ ամբողջ ժամանակ ինձ զբաղեցնում էր մի միտք  
միայն. ինչպե՞ս գործել հետագայում: Ինչպե՞ս ապա-  
ցուցել բանտապետներին, վոր հեղափոխականը, վորը  
գիտե, թե ինչի՞ համար է մարտնչում, չի վախենա  
վոչ մի պատժից:

Յես հացադուլ հայտարարեցի: Ութ որվա ըն-  
թացքում յես սխտեմատիկաբար կարցերից դուրս  
էյի նետում այն ամբողջ սնունդը, վոր բերում էյին  
ինձ համար: Իններորդ որը բանտ չեկավ դատախազը՝  
Ռիմսիկ-Վալչեայից: Նա կարգադրեց, վոր ինձ փոխա-  
դրեն բանտային ընդհանուր սենյակը և ինձ ազատեն  
հանքերում աշխատելուց:

Յես հաղթեցի: Բայց իմ որգանիղձը չդիմացավ  
յերկար հյուժման ու ծեծի: Միանգամայն հիվանդ  
զրությամբ ինձ տեղափոխեցին հիվանդանոց: Այստեղ  
սկսվեց իմ ծանոթացումն Ոկնելե-Մարի իսկական  
բանտի հետ, վորի կարանտինում ու կարցերում յես  
անց էյի կացրել տաժանքի իմ առաջին ամիսը:

Հիվանդանոցը, ինչպես և կարանտինը, վոչնչով  
չեր արդարացնում իր անունը: Վոչ մի բուժում այն-  
տեղ չկար: Բժիշկը գալիս էր ամսական մի անգամ:  
Մնացած ժամանակ հիվանդներն ողտվում էյին ան-  
զրազետ բուժակի, կամ, ավելի ճիշտ, վոստիկանի ծա-  
ռայությունից: Թոքախտը, կուրությունը և ամեն



տեսակ այլ հիվանդութիւններ նա բժշկում եր միայն մեկ միջոցով՝ գերչակաձեթով (լուծողական): Հիվանդանոցում ուրիշ վոչ մի դեղ չկար: Չկար մինչև անգամ չոգ, վորն այնքան անհրաժեշտ է քերձվածքներն ու կտրվածքներն ախտահանելու համար: Հիվանդները սնունդը կարող էին ստանալ միայն վճարով:

Չնայած դրան, քսանից վոչ ավելի մահճակալ ունեցող հիվանդանոցն այդ դրությամբ անգամ մատչելի յեր միայն շատ քիչ ճբախտավորների» համար: Հիվանդների թիվը միշտ էլ մի քանի անգամ ավելի յեր և նրանք մնում էին բանտի ընդհանուր սենյակներում: Այսպիսով բանտը հանդիսանում եր բազմազան վարակիչ հիվանդութիւններ տարածելու բույն:

Հիվանդանոցի բակում չես առաջին անգամ հանդիպեցի նոր ընկերների, վորոնք այստեղ էին յեկել: Դրանք 12 հոգի էին, գլխավորապես հանքագործ բանվորներ ու յերկաթուղայիններ՝ Սեմիգրադիէից: Նրանց դատապարտել էին հարկադիր աշխատանքների հնգից մինչև քսան տարի՝ ընդհանուր գործադուլին ակտիվ կերպով մասնակցելու համար:

Դրանց մեջ եր գտնվում ընկեր Սիրբուն, վորը հենց սկզբից լավ տպավորութիւն գործեց ինձ վրա: Դա հանքագործ բանվոր եր՝ Պետրոչինից, նախկին ռուսական ռազմագերի և Հունգարական Խորհրդային հանրապետութիւն համար մղած մարտերի մասնակիցներից մեկը:

Ընկեր Սիրբուն շատ եր պատմում մեզ Հոկտեմբերյան Պրոլետարական Մեծ հեղափոխութիւն և Խորհրդային Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի մասին: Նա վատ եր խոսում ռուսերեն, բայց ևայնպես

օգնում եր ինձ բացատրելու մյուս ընկերների հետ, վորոնք գիտեին միայն հունգարական լեզուն: Սիրբուն միշտ անվրդով եր և զուսպ: Նա աշխատում եր, ըստ հնարավորին, իր կալանքի ժամանակն ոգտագործել ընթերցանութիւն և ռուսեցման համար: Նորեկների մեջ եր գտնվում նաև մի ընկեր իր յերկու տղայի հետ և մի ուրիշ ընկեր՝ 16 տարեկան տղայի հետ միասին:

Դրանք բոլորն էլ իսկական պրոլետարներ էին, վորոնք ազահորեն կլանում էին յուրաքանչյուր լուր Խորհրդային Ռուսաստանի նոր կյանքի մասին:

Հիվանդանոցում մնալու ժամանակս լրացավ: Հարկավոր եր անցնել բանտը՝ ընդհանուր դրութիւն:

Այդ բանտում կար տասն ընդհանուր սենյակ՝ յուրաքանչյուրը քառասուն հոգու համար և չորս մեծ նախուց (սենյակ մենավոր բանտարկութիւն համար): Վերջիններս նշանակված են «արխտոկրատների» — գողութիւն մեջ բռնված ռումինական աստիճանավորների համար:

Ընդհանուր սենյակներում, բացի տախտամածներից, ուրիշ վոչ մի կարասիք չկար: Այդ սենյակները սովորաբար շատ խիտ են ընակեցված և տեղ չեն անում բոլորին: Քնում են և՛ տախտամածների տակ և՛ մերկ գետնին:

Դժվար ե պատկերացնել Ոկնելե-Մարի ընդհանուր սենյակի ամբողջ սարսափը: Պատերի ու տախտամածների վրա վխտում են միջատները: Վոջիւնները քրքրում են կալանավորներին:

Այդ բանում կալանավորները հանցավոր չեն: Նրանք չեն ստանում սապոն ու տաք ջուր և զուրկ

են սպիտակեղենը լվանալու հնարավորութունից և Յ  
ամսով չեն փոխում սպիտակեղենը: Մինչդեռ բանտե  
ունի լվացքատուն:

Բաղնիք լինում է մի քանի ամիսը մեկ անգամ  
միայն:

Ընկնելով ընդհանուր սենյակը՝ յես վերսկսեցի  
պայքարս: Յես պահանջեցի բարելավել սե-  
նյաարական դրութունը և տեղափոխել մենավոր  
բանտարկության սենյակը: Իմ այդ յերկու պահանջե-  
ել մերժեցին:

Մենակ յես վոչինչ չեյի կարող ձեռք բերել, յե-  
թե չլինէր նորեկ քաղաքական կալանավորների ոգ-  
նությունը:

Յերբ լրացավ նրանց կարանտինի ժամանակը՝  
մենք միասին պահանջներ առաջադրեցինք ադմինիս-  
տրացիային: Մենք պնդում էյինք քաղաքականների  
համար սահմանել հատուկ ռեժիմ: Պահանջում էյինք,  
վոր մեզ տանեն քրեյականներից առանձնացված սե-  
նյակ, տան հում մթերքներ և թուլատրեն ինքուրույն  
կերպով պատրաստել մեր կերակուրը, պահանջում է-  
յինք զրբեր ու թերթեր ու դադարեցնել աղահանքե-  
րում մեր աշխատանքի վերաբերյալ խոսակցություն-  
ներն անգամ:

Քաղաքականների միասնությունն ու կազմա-  
կերպվածությունն այն հետևանքն ունեցան, վոր  
բանտում որեցոր սկսեց աճել մեր հեղինակությունը,  
և դիրեկտորը չեր համարձակվում մեր նկատմամբ  
գործադրել ռեպրեսիվ միջոցներ, առանց վերադաս իշ-  
խանության թույլտվության:

Բանտը ժամանեց զլիսավոր բանտային վարչու-

թյան պետ Իոնեսկու-Մարիցան: Նա մեզ հայտնեց,  
վոր ինք պարտավոր է պահպանելու ուսմինական  
բանտային որենքները, վորոնցով մենք չենք կարող  
վորեւե արտոնություն վայելել: Նա առանձնապես  
պնդում էր, վոր մենք պարտավոր ենք աշխատելու  
աղահանքերում: Բայց բանտային վարչության պետն  
այնպիսի համերաշխ դիմադրություն գտավ, վոր ան-  
միջապես մեկուսացրեց մեզ քրեյականներից և բավա-  
րարեց մեր պահանջները, բացի հացն ամեն որ տա-  
լու պահանջից:

Հետզհետե քաղաքականների մեր խմբակն ավե-  
լանում էր: Մեզ մոտ էյին դալիս կալանավորների  
նորանոր խմբեր: Մեր կուկեպիլն ուներ արդեն 60 հո-  
գի: Մենք ապրում էյինք համերաշխ ընտանիքով, զբաղ-  
վում էյինք ինքնակրթությամբ, տարածում էյինք մեր  
ազդեցությունը քրեյականների վրա և նրանց մեջ մեծ  
հարգանք ձեռք բերինք:

Մեզ մոտ մշակվել էր որվա միանգամայն ճիշտ  
կարգ ու կանոն: Ժամի վեցին հնչում էր վեր կենա-  
լու ազդանշանը: Բանտային վերակացուները մտնում  
էյին մեր սենյակները և ստուգում կալանավորների  
թիվը: Մեզ հաջողվեց հասնել նրան, վոր վեր չէյինք  
կենում այդ արարողության ժամանակ: Սենյակի հեր-  
թապահը պատրաստում էր նախաճաշը՝ թեյ յեզիպ-  
տացորենի բլիթի հետ:

Նախաճաշից անմիջապես հետո սկսվում էյին պա-  
րագմունքները: Մենք գրագիտություն էյինք սովո-  
րեցնում նրանց, ովքեր զրել ու կարդալ չզիտեյին:  
Բացի դրանից, համարյա ամեն որ ընկերները զեկու-  
ցումներ էյին անում բանվորական շարժման, կուսակ-

ցութջան պատմութեան, Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի մասին և այլն: Այնուհետև կազմակերպված եր ուումինական և ուսական լեզուներին ուսուցում:

Դասերին մասնակցում էին բոլորը, բացի որպայաններէ: Որպայանները պետք է հող տանէին սենյակի կարգի, ինչպէս նաև կերակրի մասին: Մենք միասին կարգում էինք այն սակավաթիւ լեզալ թերթերը, վորոնք մեր ձեռքն էին ընկնում, և ապա քննարկում էինք նրանց բովանդակութիւնը:

Մեր դիսկուսիաներում հատուկ տեղ էին դրավում Կոմունիստական Ինտերնացիոնալի II Կոնգրեսի վորոշումները: Բանը հասնում էր ջերմ բանավեճերի Սեմիրգրապէյի պրոֆմիւթենական բյուրոկրատներին դեմ, վորոնք կատաղորեն յեղնում էին Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ ընդունվելու Ձ1 պայմանների դեմ: Նրանք յերկրպագում էին այսպէս կոչվող Ձ<sup>1</sup>/<sub>2</sub> Ինտերնացիոնալին, «ձախ» սոցիալ-դեմոկրատներէջ բաղկացած այդ վիժվածքին: Մեզ հաջողվեց համոզել շատ բանվորներին, վոր Ձ<sup>1</sup>/<sub>2</sub> Ինտերնացիոնալն ստեղծված է միայն այն նպատակով, վորպեսզի հեղափոխական բարձրագոյ ֆրակցիոնով հետ պահեն բանվորներին կոմունիստական ճամբարն անցնելուց:

Դիսկուսիաներին համար մեզ առատ սնունդ էր տալիս 1920 թվին ընդհանուր գործադուլը:

Յես և մյուս ընկերներն ապացուցում էինք, վոր ընդհանուր գործադուլը սոցիալ-դեմոկրատական լիզերները գնահատում էին վորպէս ցույց միայն և վոչ թէ վորպէս բանվոր դասակարգի պայքարի բարձրագույն ձևերէջ մեկը: Մենք մեր պարտութեան

փորձով ապացուցում էինք, թէ ինչպիսի հակայական նշանակութիւն ունի միասնական ու միաձույլ հեղափոխական բանվորական կուսակցութիւնն աշխատավորներին հաջող պայքարի համար:

Անընդհատ պարապմունքներով ու բանավեճերով անցնում էր ժամանակը մինչև ցերեկվա ժամի մեկը, այսինքն՝ մինչև ճաշի ժամը: Ճաշից հետո մենք վերսկըսում էինք ուսուցումը, կարգում էինք: Վոմանք սկսում էին քանդակել փայտի վրա և մշակում էին քարեր: Փայտից ու քարից պատրաստած այդ առարկաները՝ «Հիշատակ Ոկնելե-Մարից» մակազրոթյամբ մենք ուղարկում էինք մեր հարազատներին: Պրոֆմիւթյունները հաճախ վաճառում էին այդ իրերը աճուրդներում: Կալանավորներէջ շատերը, — առանձնապէս սեմիրգրազի կալանավորները, — մեծ արվեստ ցուցարեիցին այդ աշխատանքում:

Ժամի 6-ին բանտասենյակը փակվում էր, բայց մենք դեռևս չէինք պառկում քնելու: Լրագիր էինք կարդում, իսկ ամենից հաճախ վիճարանում էինք: Ժամի 11-ին հնչում էր ազդանշանը և լուսթյուն էր տիրում: Բայց իրոք մենք դեռ յերկար ժամանակ չէինք քնում, այլ կիսաձայն միմյանց էինք հաղորդում մեր մտքերն ու տպավորութիւնները:

Բանախ պատերի յետևում միալար միմյանց ձայնակցում էին պահապան պոստերը: Այդ «որորի» տակ մենք սովորաբար քնում էինք:

Այսպէս շարունակվեց մինչև քսաներկու թիւը, բերը քաղաքական մասնակի ներման հետեանքով մեր յանտից ազատվեց ավելի քան 50 քաղկալանավոր:

Այդ ներմանը նախորդեցին հետևյալ անցքերը: Ավերեսկուլի կառավարութիւնն իր տեղը մաքրեց լիբերալ կուսակցութեան կառավարութեան համար: Լիբերալ կուսակցութիւնը նախապատրաստում էր նոր ընտրութիւնները և զրա հետ միաժամանակ «270-ի» հռչակավոր գառավարութիւնը:

Այդ գառավարութիւնը կազմակերպված էր ընտրութիւններից առաջ՝ հեղափոխական բանվորների ներկայացուցիչների ղեմ, վորոնք իրենց գործունեյութեամբ հասան նրան, վոր սոցիալիստական կուսակցութիւնը մտավ Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ և զլիսավորապէս սոցիալիստական կուսակցութեան այն պատգամավորների ղեմ, վորոնք քվեարկել էին Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ մտնելու ոգտին:

Յերկրի նոր ընտրութիւններին պատրաստվելը հնարավորութիւն տվեց ուսմինական յերիտասարդ կոմկուսակցութեանը, չնայած տեւորին ու հալածանքներին, զոյութիւն ունենալու կիսալիզալ ձևով և հրատարակելու իր՝ «Սոցիալիզմուլ» կենտրոնական որդանը:

Կոմկուսակցութեան նախընտրական ծրագրում կենտրոնական տեղերից մեկն էին զրավում պայքարի լոզունգները՝ տեւորի ղեմ, բոլոր քաղկալանավորների ազատագրման համար:

Ամենալայն մասսաներն արձագանդեցին Ռուսիայի կոմկուսակցութեան լոզունգներին:

Այդ շարժումն ուժեղ արձագանգ զտավ նաև արտասահմանում: «270-ի» գառավարութիւնը, վորը տեւեց մի քանի ամիս, ուսմինական կառավարութեանը

չտվեց ցանկալի արդյունքներ: Կառավարութիւնն առիթ էր փնտռում գառավճիւ չկայացնելու համար: Այսպէս կոչվող ընդհանուր ներումը տվեց այդ առիթը:

Բայց իրոք ներումն ընդհանուր չէր: Շատ մեղադրյալներ ու քաղկալանավորներ չընկան այդ ներման տակ: Այդ ներման տակ չընկա և յես:

Ներումից հետո բանտում մնաց ընդամենը հինգ-վեց քաղկալանավոր: Բանտապաններն սգովեցին զրանից և փորձեցին մեզ ստիպել աղահանքերն իջնելու: Կրկին սկսվեց պայքարը: Մեզ շղթայեցին, պցեցին ցուրտ և մութ կարցերները, բայց մենք անձնատուր չէյինք լինում: Մենք հացադուլ հայտարարեցինք:

Հացադուլն սկսվելուց յերեք որ անց կարգազրութիւն ստացվեց ինձ մի այլ բանտ — Վախարեշտ փոխադրելու մասին:

III Գ Լ Ո Ի Ե

Վ Ա Կ Ա Ր Ն Շ Տ

Վախարեշտը Ռուսիայի խոշորագույն փոխազրուական բանտն է: Այդ բանտով անցնում են տասնյակ հազարավոր կալանավորներ, վորոնք «մշտական ընտրութեան» են ուղարկվում այլ բանտերը:

Վախարեշտի բանտը գտնվում է նախկին վանքի շէնքում, վորը կառուցված է XVIII դարի սկզբներում: Վանքի գաժան խցերը, յեկեղեցիները, մատուռները և արհեստանոցները վերածվել են քաղկալանավորների համար բանտասենյակների: Քարե պարկերը, վոր կառուցել է յեկեղեցին իր կողմնակիցների «մարմինը

մեռցնելու» և իր հակառակորդներին «վողին սպանելու» համար, ներկայումս սքանչելի կերպով ծառայում են կապիտալիստական իշխանությանը: Այստեղ նա գերության մեջ է պահում իր դատակարգային և քաղաքական թշնամիներին:

Այստեղ իշխում է գերեզմանի ցուրան ու ներման հոտը: Անիծված քարե զանգվածներ: Վորքան լաց ու կոծ և հեծեծանք են լսել նրանք: Վորքան արցունք և արյուն է թափվել այստեղ:

Համարյա կես տարի յեր անցել Վակարեշտ գալուս որվանից: Բանտի բնակչությունը շարունակ փոփոխվում էր: Յուրաքանչյուր յերեք որը մեկ գալիս ու գնում էյին կալանավորների նորանոր խմբեր:

Մի անգամ առավոտյան բանտում լուր տարածվեց՝ «270-ի» դատավարությամբ դատապարտվածների խմբի դալու մասին:

Մեկ հայտնի դարձավ, վոր նորեկներին ուզում են շղթայել ձեռքի ու վոտքի կալանդներով: Քաղաքական կալանավորների սենյակներում հուզվեցին: Լավեցին բարձրաձայն բողոքներ: Վրդովմունքի միասնական պորթկումը տիրեց բոլորիս՝ և՛ մեկ, և՛ նորեկ ընկերներին:

Սկսվեց դատաստանը: Յեկվորներին յենթարկել էյին դաժան ձեծի, շղթայել և պցել կարցերը: Հաջորդ առավոտյան մենք իմացանք, վոր նրանք հացադուլ են հայտարարել: Իսկ հետո ամեն ինչ հանգարավեց... մենք շատ աշխատեցինք, բայց չկարողացանք վորեն կապ հաստատել այդ ընկերների հետ:

Միայն հետագայում մենք իմացանք այն ժամանակ բանտում տեղի ունեցած անցքերի մասին: Գա-

զագած ադմինիստրացիան հացադուլի մասնակցողներին յենթարկել էր ամենադաժան տանջանքների ու ձեծի: Մեկ չեր հասնում վոչ մի ձայն, վորովհետև այն կարցերները, վորտեղ գտնվում էյին նրանք՝ միանգամայն կարված էյին բանտի մնացած մասից: Իսկ հետո սկսեցին այդ ընկերներին ուղարկել ուսմինական տաժանակրական բանտերից ամենասուկալին՝ Իոֆտանան:

Մի քանի ընկերներ այնքան էյին խեղվել, վոր ադմինիստրացիան չհամարձակվեց նրանց այդ ձևով ուղարկել և նախապես տեղավորեց նրանց հիվանդանոցում:

Մեր բոլոր բողոքներին, շարգված ընկերներին շղթաներից ազատելու մեր բոլոր պահանջներին, բանտապանները կարճ պատասխան էյին տալիս.

— Նրանք շղթայված են հատուկ կարգադրությամբ, վորը մենք պարտավոր ենք կատարելու:

Ադմինիստրացիայի դեմ մղած մեր հետագա մարտերում մենք արդեն հանդես էյինք գալիս վորպես ամրակուռ կոլեկտիվ: Մենք հասանք նրան, վոր մեր ընկերներից վոչ վոքի այլևս չէյին յենթարկում տանջանքների ու ձեծի: Վոչ վոք նույնպես չկողոպտվեց:

Կալանավորներին կողոպտելով՝ հսկայական կարողություն եր դիզել Վակարեշտի բանտի ավագ վերակացու Նեգոբցան, — դիրեկտորի աջ ձեռքը:

Այդ սրիկան կատարյալ սաղիստ էր: Նա կալանավորներին տանջում էր վոչ միայն նրա համար, վոր նյութական շահ ստանա, այլև այն պատճառով, վոր նա դիվային հրճվանքով էր նախում անպաշտպան

մարդկանց տանջանքների վրա: Միևնույն ժամանակ նա ազի արցունք եր թափում, յերբ հիվանդանում եր իր սիրելի շնիկը:

Կարճահասակ, համարյա անդամալուսձ մի սիֆիլիտիկ, վորը շարունակ հենվում եր ձեռնափայտին, Նեգոիցան այնուամենայնիվ չափազանց յեռանդուն եր կալանավորներին կողոպտելու հաշվին հարստանալու գործում: Կալանավորների նոր խմբին նա շարունակ գիմավորում եր բանտի ներքին բաղը տանող մուտքի մոտ՝ ծածկի տակ: Այստեղ եր սովորաբար գտնվում հերթապահ պահակը և այն արկղը, վորի մեջ գիշերը պահվում էին բոլոր բանտասենյակների բանալիները: Այստեղ եր կատարվում նաև բանտը յեկող նոր բանտարկյալների ցուցակագրումը:

Բանտարկյալներին՝ նրանց հետազայում սպասող բռնություններին նախապատրաստելն սկսվում եր հենց ծածկի տակ: Նեգոիցան միշտ ել գտնում եր առիթ բժախնդի լինելու համար: Բանտարկյալն այնպես չքայլեց, այնպես չխոսեց, — և նրան դաժանորեն ձեծում էին: Այդ ձևով «մշակված» քրեյական բանտարկյալը, ընկնելով կարանտինը, արդեն չեր համարձակվում գիմագրել և «բանտային Իվանները» մաքուր պլոկում էին նրան:

Կալանավորների յուրաքանչյուր նոր խումբը գալուց հետո Նեգոիցայի գործակալները շուկայում վաճառում էին կալանավորներից հանած հագուստեղենի ամբողջ կույտեր: Նեգոիցայի կողմից բանտասենյակների ավազ նշանակվող «բանտային Իվանները» ծծում էին կալանավորներից բոլոր հյութերը: Այն ամենը, ինչ չէին կարողանում խել սպառնալիքներով, նրանք կորզում էին բրեյական կալանավորներից թղթախա-

ղով, կամ առասպելական բարձր գներով նրանց վաճառելով նարկոտիկներ (թմրադեղեր) և վոզելից խմիչքներ: Ինքնին հասկանալի չէ, վոր այդ ամենը բանտում թուլլատրվում եր վոչ միայն Նեգոիցայի զիտությամբ, այլև նրա անմիջական հրահանգներով:

Նեգոիցայի այսպիսի ձևով վաստակած հարբատությունների մասին հասկացողություն և տալիս հետեյալ փաստը: Յերբ հետազայում նա մի խոշոր գողություն համար հեռացվեց պաշտոնից ու դատի տրվեց, նրա մոտ հայտարերվեց մոտ 4 միլիոն լեա<sup>1)</sup> կարողություն: Սակայն նա մի հնարքով դուրս պրծավ և այժմ մայրաքաղաքում բացել է մի շքեղ կաֆե:

Մենք մեր պարտքն էլինք համարում պայքարելու այդ չարիքի դեմ, թեև այդ մեզ անհամեմատ ավելի քիչ եր ֆլատում, քան թե քրեյականներին: Մենք քրեյական մասսաներին կազմակերպեցինք «Իվանների» դեմ: Յիկ այստեղ ևս մենք ձեռք բերինք վորոշ արդյունքներ, թեև այդ արդյունքներն այնքան մեծ չէին, վորքան մենք կցանկանայինք տեսնել: Այդ պայքարը մեծ չափով բարձրացրեց մեր հեղինակությունը բանտում, իսկ «Իվանները» դարձան մեր ամենավոխերիմ թշնամիները:

Վոչ բոլոր կալանավորներն էլին տառապում այդ «ահեղ Իվաններից»: Ռումինիայում յերբեմն գանձագող աստիճանավորներին վիճակվում է ծանոթանալ Վակարեշտ բանտին: Այդ «պատվարժան» մարդկանց բանտում մտալը մեղմացվում է ամեն կերպ: Նրանք ստանում են առանձին սենյակներ, կարող են իրենց

1) Լեան = 4 կոպեկի:



«նոր բնակարանը» զարգարել սեփական կարասիքով, գորգերով, նկարներով և այլն: Այն ժամանակ «Իվանները» դառնում են լակեյներ (սպասավորներ): Ասենք ավելի վատ չեն ապրում նաև սովորական գրպանահատները և այլ սրիկաները, յերբ, իհարկե, հաջողվում է ժամանակին մի ապահով վայր տեղափոխել իրենց ավարը և ազդեցիկ փաստարանների. ոգնությամբ դրամի մի մասը փոխադրել բանտ: Այդ առանձին բանտասենյակներում հաճախ տեղի յեն ունենում յերեկույթներ ու շվայտանքներ, փորոնց մասնակցում են բանտի ծառայողները, ինչպես նաև «տեղական» կամ քաղաքից հրավիրված պոռնիկները:

Ութ ամիս տեեց իմ բանտարկությունը Վակարեշտում և նա ընդհատվեց միանգամայն անսպասելի ձևով: Մի անգամ, յերբ յես մյուս կալանավորներին հետ միասին գտնվում էյի բակում, վերակացուն սկսեց ծեծել քրեյականներից մեկին: Վերջինիս ամբողջ հանցանքն այն էր, վոր նա... չգիտեր ումինական լեզուն: Նա չէր հասկացել վերակացուի տված կարգադրությունը և չէր կատարել այն:

Այդ այնքան վրդովեցուցիչ էր մինչև անգամ ումինական բանտի պայմաններում, վոր յես չգիմացա: Յես խփեցի վերակացուին: Ինձ քարշ տվին ծածկի տակ և այնտեղ գազանարար ծեծեցին: Վերակացուն կարգադրեց, վոր ինձ զցեն կարցեր:

Տեղի ունեցածի մասին լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ բանտում: Իմ ընկերները — քաղկալանավորները — սկսեցին բուռն կերպով բողոքել: Վրդովեցին նույնպես քրեյականները:

Իրեկտորը վախեցավ հասունացող «բունտի» հետևանքներից և կարգադրեց անհապաղ ինձ յետ ուղարկել Ոկնելե-Մար:

IV Գ Լ Ո Ի Ս

ՆԱԽԿԻՆ ՎԱՅԻՌԻՄ

Բանտի ադմինիստրացիան ինձ չէր մոռացել: Նա հիշում էր, թե ինչ պայմաններում ինձ դուրս բերին Ոկնելե-Մարից և չէր ստիպում ինձ աշխատելու աղահանքերում:

Իմ բացակայության ժամանակ բանտն էյին բերել մի խումբ գյուղացիներ, վորոնք զատապարտված էյին 1919 թվի հունվարին Սոտխում տեղի ունեցած ապստամբության գործով: Այդ ապստամբության հետեվանքով կազմակերպվեցին խորհուրդներ, վոր հետո դաժանորեն ճնշվեցին կառավարության կողմից: Տասնըմեկ հազար մարդ փլատվեցին այդ անցքերի ժամանակ: Այդ գործով զատապարտված գյուղացիներն անցել էյին արդեն բոլոր բանտերից և կրել էյին ամենատուկալի տանջանքներ:

Նրանք վոչինչ չգիտեյին այն պայքարի մասին, վորը մենք մի ժամանակ մղել էյինք այստեղ՝ աղահանքերում աշխատելուց հրաժարվելու համար: Տանջանքներից ու ծաղրանքներից ուժասպառ՝ նրանցից մի քանիսը դիմադրություն ցույց չտվին և քրեյականների հետ միասին իջան աղահանքերը:

Յես նրանց բացատրեցի, վոր նրանք իրենց այդպիսի վարքագծով ի չիք են զարձնում այն հազթա-

նակները արդյունքները, վոր մենք ձեռք ելինք բերել թանգ գնով: Նրանք միանգամայն համաձայնեցին ինձ հետ և անմիջապես հրաժարվեցին աղահանքերում աշխատելուց:

Միջանցքներով վազվզել սկսեցին վերակացուները, ուժգին բացվում ու փակվում էլին բանտասենյակների դռները: Մեզ մի-մի հողով սկսեցին կանչել ղերեկատորի մոտ, իսկ այնտեղից ուզելով հաղորդակցություններ ուղարկեցին կարգեր: Անցավ մի քանի որ և մեզ կըրկին բանտասենյակները վերադարձրին, իսկ աղահանքերում մեր աշխատելու հարցը կարծես մոռացություն արվեց:

Չնայած չափազանց միանման են որերը բանտում, չափազանց սուղ են նրանք տպավորություններով, բայց այնուամենայնիվ ժամանակն այնտեղ նույնպես առաջ է դնում: Վրա հասավ 1924 թվի կեսը, յերբ տեղի ունեցան այնպիսի անցքեր, վորոնք ուժեղ չափով անդրադարձան մեր հետագա վիճակի վրա:

Մեր ընկերներից մեկը՝ խոտինյան դյուզացի Յակովենկոն, դանակով հարձակվեց պահապանի վրա և փորձեց փախչել: Յերկար հետապնդումից հետո հաջողվեց նրան բռնել: Սկսվեց հետաքննությունը: Ադմինիստրացիան հարցաքննություն կանչեց մի քաղաքականի, վորը փախչողի հետ նստած էր միևնույն բանտասենյակում: Չստանալով վոչ մի ցուցմունք՝ ադմինիստրացիան ձեռնեց հարցաքննություն, շղթայեց նրան և ուժով ուղարկեց աղահանքերը: Յես բողոքեցի դրա դեմ և ինձ միացան մնացած քաղկալանավորները: Մեզ բոլորիս դաժանորեն ձեռնեցին և իջեցրին աղահանքերը:

Բայց մենք աշխատանքի չանցանք և վճռեցինք պայքարել մինչև լիակատար հաղթանակը: Մենք աշխատեցինք մեր վրդովմունքը վերածել մասսայական յելույթի՝ ընդդեմ աշխատանքի անմարդավայել այն պայմանների, վոր գոյություն ունեյին աղահանքերում: Մենք հացադուլ հայտարարեցինք և աշխատեցինք մեր ազդեցությունը տարածել նաև քրեյականների վրա: Այս անգամ մեր ջանքերը պտակվեցին հաջողությամբ: Մի քանի ժամից հետո արդեն աղահանքերի կառավարիչ ինժեները պահանջեց մեզ անհապաղ հեռացնել աղահանքերից:

— Հակառակ դեպքում, — հայտնեց նա, — յես չեմ կարող ստիպել, վոր աշխատեն քրեյական բանտարկյալները:

Մեզ բարձրացրին վերև: Բայց մենք չբազարեցրինք հացադուլը, պահանջելով, վոր հատուկ ուժով սահմանեն քաղաքականների համար և միանգամայն ղաղաքեցնեն խոտակցությունները՝ աղահանքերում մեր հետագա աշխատանքի մասին: 10 որ անց, բանտը յեկավ դատախազ Շատայ-Բեյը: Նա հավաքեց բոլոր կալանավորներին և հայտնեց, վոր ցանկանում է մեզ հետ խոսել յերես առ յերես: Բանախ ղերեկատորը նրան հայտնել էր, վոր մենք պատրաստում էյինք «մասսայական ասպտամբություն», և դատախազը կամենում էր հայտարարել «բունտի» նախաձեռնողներին: Սակայն համոզվելով, վոր քրեյականներն իրենց մասսայով ամբողջովին մեր կողմն են և վոչ վոր նրան չի հայտնի վոչ մի նախաձեռնողի անուն, դատախազն արագ անձնատուր յեղավ: Նա կարգադրեց բավարարել մեր բուլոր պահանջները և հացադուլի բոլոր մասնակցողները:

ըին տեղավորել հիվանդանոցում: Իսկ մնացած հար-  
ցերը վճռելու համար նա կանչեց բանտային գլխավոր  
վարչութիւնը:

Այդ ժամանակ բանտային գլխավոր վարչութիւնը  
պետ եր նշանակվել մայրը Չերնատը՝ նախկին զինվո-  
րական դատախազը, վորը հայտնի յեր «270-ի» հռչա-  
կավոր դատավարութիւնից: Բանտը գալով նա հայտ-  
նեց զիրեկտորին, վոր այստեղ մեր տեղը չէ, քանի  
վոր մենք չափազանց մեծ համակրանք ենք ձեռք բե-  
րել քրեյականների կողմից:

Չնայած նրան, վոր մենք դեռևս չեյինք կազ-  
դուրվել հացադուլից հետո և չափազանց թույլ եյինք:  
Չերնատը կարգադրեց մեզ անհապաղ ուղարկել Դոֆ-  
տանա՝ այնտեղ կրելու համար մեր պատիժը:

#### Կ Գ Լ ՈՒ Խ

### ԴՈՖՏԱՆԱՅԻ ԿԱԶԵՄԱՏՆԵՐՈՒՄ

Դոֆտանա: Այդ բանտի մտայլ համբավը տարած-  
ված է ամբողջ Ռուսիայում: Սարսափ և ներշնչում  
լով նրա անունը միայն: Այդ բանտը գալուց դեռ շատ  
առաջ յես բազմաթիւ սարսափելի պատմութիւններ եյի  
լսել Դոֆտանայում տիրող վայրագ ուժիմի մասին:

Այդ այստեղ է, վոր կալանավորներին շղթայում  
են 12-15 կիլոգրամ քաշ ունեցող շղթաներով: Շղթա-  
ների զընգոցը չի դադարում վնչ ցերեկով և վնչ զի-  
շերով: Կալանավորի քնած ժամանակ զործած ամենա-  
փոքր շարժում առաջացնում է մետաղի զընգոց: Շըղ-  
թաները չեն հանվում մինչև անգամ բաղնիքում:

Դահլճների զազրելի դյուտարարութիւնը հնա-  
րել է ավելի ևս սարսափելի բան, — «գերիեր» «ԱՇ»  
սեկցիայում: Դրանք միանգամայն մուլթ «քարե պար-  
կեր են»: Հատակն ու պատերը ցեմենտից են, իսկ  
առաստաղը՝ յերկաթից: Սարսափելի ցուրտը թափան-  
ցում է մինչև մարդու վոսկորների ձուձը: Քունը փախ-  
չում է հոգնած աչքերից:

Վոչ բոլոր «գերիերում» կարելի յե շարժվել:  
Նրանցից մի քանիսում կալանավորներին նստեցնում  
են հատակին, ձեռքի շղթաներն ամբացնում են պա-  
տերի ողերին, իսկ վոտքերի շղթաները՝ հատակի ողե-  
րին: Այսպիսով կալանավորն ամբողջ ժամանակ մնում  
է կգացած դրությամբ:

Անա թե ինչ եյի լսել Դոֆտանայի մասին: Մինչ-  
դեռ յես ճնառ ավելին: Քանի վոր իրականութիւնը  
գերազանցեց այն, ինչից վախենում եյի:

Դոֆտանայի բանտը ծառայում է բանտի ուժի-  
մին չենթարկվող կալանավորներին «ուղղելու» հա-  
մար: Ռուսիայի բոլոր բանտերից այստեղ են բերում  
առանձնապես «մեղանշածներին» — իրենց պատիժը  
կրելու համար: Նրանց այստեղ սպասում եր ամենա-  
սարսափելի ուժիմ:

Բանտի մտայլ պայտածէ շենքը բարձրանում է  
շրջակայքի վրա: Նրա պատերի շուրջը խիտ ձևով դա-  
սավորված են գնդացիներ: Բանտն իր ներսում բա-  
ժանված է ութ սեկցիայի՝ առանձին բակերով: Այդ  
սաստիկ դժվարացնում է կապը զանազան սեկցիանե-  
րի կալանավորների միջև: Յուրաքանչյուր չորս սեկցիա  
միմյանց հետ հաղորդակցվում են հատուկ անցքերով:  
Բայց սեկցիաների առաջին խմբակից յերկրորդ խմբ-

բակը կարելի յե ընկնել միայն բանտի ձեզնահարկի (չեբղակի) միջով: Ահա դրանցից յուրաքանչյուրի մտաւոր սխեման:

Յերկար, նեղ միջանցք: Միջանցքի Մի կողմում մենախուցեր և մյուս կողմում՝ ընդհանուր սենյակներ ու հիվանդանոց: Մենախուցերը վանդակներ են, վորոնք թույլ են տալիս կալանավորին սենյակի յերկարութեամբ անելու միայն յերեք քայլ: Վնչ սեղան, վո՛չ աթոռ: Միայն մի հատ ծալովի մահճակալ: Նեղ, բակը նայող՝ փոքրիկ լուսամուտ: Դռան վրա փոքրիկ անցք — կալանավորին կերակուր տալու համար և դիտոց — նրան դիտելու համար:

Այդպես են մենախուցերն առաջին չորս սեկցիաներում: Մնացած սեկցիաներում մենախուցերն ավելի մութն են, վորովհետև նրանց լուսամուտները նայում են վոչ թե դեպի բակը, այլ դեպի միջանցքը:

Առաջին չորս սեկցիաներում մարդիկ պահվում են բանտային փոքրիշատե նորմալ պայմաններում: Այստեղ կարելի յե ունենալ անկողին, գուրս գալ զրոսանքի, ստանալ տեսակցութուններ: Մնացած սեկցիաները պատժարան են հանդիսանում: Այստեղ կալանավորը միանգամայն գուրկ է զրոսանքներից, շարթվալ մեջ միայն յերեք ուր է տաք կերակուր ստանում:

Ինչպես արդեն վերևում ասացի, կալանավորներն ամենասարսափելի սեփմին յենթարկվում են «ԱՇ» սեկցիայում: Այդ սեկցիան միանգամայն մեկուսացված է ամբողջ բանտից և խցկված է յերկու խուլ բարձր պարիսպների միջև՝ գտնվող մի նեղ տարածութեան մեջ: Նրա դիմաց՝ դիտարանի վրա շարունակ պահակ է գտնվում:

«Աշ» սեկցիայի մասին կալանավորները հորինել են հետեյալ դարձվածքը.

«Սկզբում՝ «ԱՇ», հետո՝ հիվանդանոց, այնուհետև՝ դեպի զերեզման»...

Իզուր չե, վոր այն տարվա աշնանը, յերբ յես Դոֆտանա յեկա, «ԱՇ» սեկցիայում մեռել էր 80 կալանավոր:

Յեկ անա ինձ ու իմ ընկերներին տանջանքների այդ վայրն ուղարկեցին Ոկնելե-Մարից:

Այն բնութագրերը, վորով մենք Դոֆտանա յեկանք, փրկեց մեզ ծեծից: Բայց մեղանից անմիջապես խլեցին մեր հազուստը և փոխարենը ավին ցնցափններ՝ լի վոջիւներով: Մեր բողբոջները չոգնեցին: Մեզ պատասխանեցին, վոր դիրեկտորը պետք է անձամբ խոսի մեզ հետ: Իսկ առայժմ մեզ ուղարկեցին «ԱՇ» սեկցիան:

Մեզ համար մնում էր պայքարի միակ միջոցը՝ հացադուլը: Մենք հրաժարվեցինք վոչ միայն ուտելուց, այլև խմելուց: Հացադուլը շարունակվում էր արդեն տասն ուր, յերբ մեզ մոտ յեկավ բժիշկը:

— Յեթե դուք հետազայում նույնպես հրաժարվեք ջրից, — հայտարարեց նա մեզ, — յես պատասխանատու չեմ ձեր կյանքի համար...

Բայց մենք անձնատուր չեխինք լինում:

Յեկավ դիրեկտորը և փորձեց բանակցել մեզ հետ: Մենք զբանից հրաժարվեցինք: Հացադուլի տասներկուերորդ ուրը մենք ազատվեցինք «ԱՇ» սեկցիայում պատիժը կրելուց և փոխադրվեցինք հիվանդանոց, իսկ հետո՝ ընդհանուր բանտասենյակները:

Բայց հարձակումը մեր դեմ չղղարեց:

Չերնատը կազմակերպել եր կոշկեղենի արհեստանոց և առաջարկեց աշխատել այնտեղ: Մենք դրանից ել կտրակնանապես հրաժարվեցինք: Այն ժամանակ Դոֆտանայի դիրեկտոր դահիճ Ստանեսկուն և մայրը Չերնատը վճռեցին ամենից առաջ տեսնել նախաձեռնողների գառաստանը: Նրանք կանչեցին մի քանիսին (վորոնց թվում և ինձ) և առաջարկեցին գնալ արհեստանոցը: Մենք, իհարկե, յերկրորդ անգամ հրաժարվեցինք: Այն ժամանակ մեզ կրկին ուղարկեցին «ԱՇ» սեկցիան, վորտեղ մեզնից մի քանի հոգի հյուծվածութունից, սովից ու մրսելուց հիվանդացան թոքախտով:

1924 թվի սեպտեմբերին գյուղացիների ապստամբութունը բռնկվեց հարավային Բեսարաբիայի Թաթարբունար շրջանում: Ապստամբները Թաթարբունարում հռչակեցին խորհրդային իշխանութուն:

Թաթարբունարի ապստամբութունն սզնութունը չստացավ այլ վայրերից. բացի դրանից, ապստամբները վատ էյին զինված և չունեյին վորձված զեկավարութուն: Այդ պատճառով մի քանի ուրից հետո ուսմինական զորքերին հաջողվեց ճնշել ապստամբութունը: Ապստամբների մեծ մասն ընկալ մարտերում: Մնացածներին ուսմինական իշխանութունը յենթարկեց զազանարարո գառաստանի: Ապստամբութունից մի տարի հետո մոտ 500 խեղված ու խոշտանգված գյուղացիներ ներկայացան ուսմինական զինվորական դատարանի առաջ:

Այդ անցքն անդրադարձավ նաև բանտում մեր ուսմի մի վրա: Նոր հարձակում սկսվեց ադմինիստրացիայի կողմից: Մեզ ուզում էյին, ինչ ել վոր լինի, ստիպել աշխատելու ադահանքերում կամ բանտի ար-

հեստանոցներում: Չկարողանալով մեզ հնազանդեցնել՝ ադմինիստրացիան փոխեց իր տակտիկան: Միքանի ուրից հետո ինձ և մյուս ընկերներին ազատեցին «ԱՇ» սեկցիայից և փոխադրեցին Վակարեշտ: Այստեղ մեզ պահեցին մի ամիս և հոգի էյին հանում աշխատանքի վերաբերյալ անընդհատ խոսակցութուններով: Մեզ մինչև անգամ խոստացան վճարել աշխատանքի համար: Իսկ ինձ ասացին, վոր յես կարող եմ աշխատել իմ մասնագիտությամբ — դերձակությամբ, յեթե չեմ ուզում աշխատել կոշկեղենի արհեստանոցում: Վոչ մի հորդորանք ու շոտտում չոգնեցին: Այն ժամանակ ադմինիստրացիան, մեզ համարելով դիմադրության նախաձեռնողները, ինձ ու մի այլ ընկերով փոխադրեց մի ուրիշ տաժանակրական բանտ՝ «Այուդ»:

VI Գ Լ Ո Խ Խ

Հ Ա Յ Ա Դ Ո Ի Լ

Այստեղ յես ուզում եմ մի վորոշ շեղում կատարել և պատմել, թե ինչպես ե սովորաբար դասավորվում քաղկալանավորների կյանքը բանտում այն մոմենտներին, յերբ մեր բանտային կենցաղը մեր կողմից կարգավորելու իրավունքի համար ադմինիստրացիայի դեմ մղած պայքարը վերջանում ե համեմատական հաղթանակով:

Քաղկալանավորների առաջին հոգան ե՝ բանտի ադմինիստրացիային հակադրել ամբախուռ կազմակերպված կոլեկտիվ:

Այդ տեղի յե ունենում հետևյալ ձևով:

Յերբ բանտում հավաքվում են զգալի թվով քաղ-  
կալանավորներ, նրանք ընտրում են բանտային կոմի-  
տե, վորը վարում է կոլեկտիվի բոլոր գործերը: Կոմի-  
տեն բանակցում է ազմինխտրացիայի հետ, վարում  
կոլեկտիվի անտեսութունը, կազմակերպում է նրա  
քաղաքական ու կուլտուրական կյանքը: Շարունակ  
հատուկ ուշադրութուն է նվիրվում վերջին մոմենտին:  
Կոմիտեն իր կուլտհանձնաժողովի միջոցով կազմակեր-  
պում է հանրակրթական դասընթացներ, դասախոսու-  
թյուններ ու զեկուցումներ քաղաքական թեմաների  
վերաբերյալ, դրսից ձեռք է բերում քրականություն,  
հրատարակում է անլեզալ ձևով բանտային թերթ:  
Դոֆտանայում, որինակ, մեզ մոտ լույս էր տեսնում  
չերկու թերթ. բոլշեիկյան կազմակերպության որգան՝  
«Կարմիր Դոֆտանա» և ընդհանուր-բանտային թերթ՝  
«Դոֆտանայի վանդակի յետևում»: Ժամանակ առ ժա-  
մանակ լույս էր տեսում նաև յերգիծական՝ «Սպին»  
(«Փուշ») ամսագիրը:

Քաղկալանավորների ու նորեկների միջև տար-  
վող կուլտուր-քաղաքական աշխատանքի հետ միասին,  
կոմիտեն պետք է այսպես թե այնպես այդ աշխա-  
անքը կարգավորեր նաև բանտի մնացած բնակչու-  
թյան մեջ: Բանն այն է, վոր վոչ բոլոր քրեյական-  
ներն էլին քրեյական հանցագործներ: Հարյուրավոր  
բանվորներ, գյուղացիներ ու արհեստավորներ նստած  
էլին հարկադիր աշխատանքների դեմ բողոքելու, հարկը  
չվճարելու, դասալքության համար և այլն:

Նրանց հետ մենք կազմակերպում էլինք զրույց-  
ներ քաղաքական թեմաների շուրջը: Յերբեմն էլ մեզ  
հաջողվում էր նրանց կազմակերպել ազմինխտրացիայի  
դեմ պայքարելու համար:

Պետք է հիշատակել քաղկալանավորների կոմի-  
տեյի մի չափազանց կարևոր ու պատասխանատու պար-  
տականության մասին ևս: Դա կապն էր զրսի հետ:  
Միայն այդ պայմանով բանտում տեղի ունեցող բոլոր  
անցքերը, — կալանավորների ձեռք, որսորուկցիան,  
հացադուլները, — հայանի յեն զանունում բանտի վան-  
դակից դուրս: Բանվորական հասարակայնությունը,  
նրա մամուլը, ՄՈՊԲ-ը շարունակ ջերմորեն արձա-  
գանդում էլին բանտում տեղի ունեցող նման անցքե-  
րին, կազմակերպում էլին կալանավորների ոգնության  
ու համակրության կամպանիաներ:

Դրսից ստացած այդպիսի ոգնությունն առանձ-  
նապես անհրաժեշտ էր մասսայական հացադուլների  
ժամանակ, վորովհետև միայն հասարակական վրդով-  
ված կարծիքը և բանտից դուրս գտնվող աշխատավոր-  
ների կազմակերպված ներգործությունը կարող էլին  
ստիպել զահիճներին զիջումներ անելու և կալանավոր-  
ներին չհասցնելու սովամահության:

Ինքնին հասկանալի չէ, վոր քաղաքական կալա-  
նավորների կենցաղի՝ մեր նկարագրած կազմակեր-  
պությունը մշտական գործող կազմակերպություն չէ:  
Կառավարությունը յերբեք չի կարող հաշտվել այն  
կարգերի հետ, վոր սահմանում են քաղկալանավոր-  
ներն իրենց համար:

Բանտապահի կամայականությունը — անա միակ  
«որենքը» ումինական տաժանակիր բանտում: Իսկ  
բանտապահն ամենեին չի ցանկանում առանձնացնել  
քաղաքականին կալանավորների ընդհանուր մասսայից:  
Այդ նրան ձեռնաու չէ: Ռումինիայում բանտային իշ-  
խանությունը ձեռնարկատեր է, վորը շահագործում է

կալանավորները բանվորական ձրի ուժն իր անձնական շահերի համար: Աղահանքերում կամ բանտի արհեստանոցներում աշխատելուց քաղկալանավորների հրաժարումը կրկնակի վնաս է հասցնում ազմինխտբացիային: Նախ՝ նա չի կարող սղտագործել հենց իրենց քաղկալանավորների բանվորական ուժը: Իսկ յերկրորդ՝ «քայքայիչ» ազդեցություն է ունենում նաև քրեյական մասսայի վրա, վարակելով նրան գազանաբարո շահագործմանը դիմադրելու վստով:

Բանտապահի կամայականությանը քաղկալանավորը կարող է հակադրել միայն հեղափոխական վողին, պայքարի ամուր կամքը: Այդ պայքարում զենք են հանդիսանում բողոքները, որստրուկցիաները և հացադուլները: Վերջիններս գործի յեն դրվում այն ժամանակ, յերբ արդեն սպառված են պայքարի բոլոր այլ միջոցները:

Պայքարով ձեռք բերած հաղթանակները հաճախ յերկարատե չեն լինում: Յուրաքանչյուր պարազա — յերկրում կառավարության փոփոխվելը, բանտի պարիսպներից դուրս տեղի ունեցած գործադուլներն ու ապստամբությունները, բանտային նոր իշխանության գալը, կալանավորի փախուստը, — այս բոլորը և ուրիշ շատ հանգամանքներ առաջացնում են ազմինխտբացիայի նորանոր հարձակումներ քաղկալանավորների դեմ, քաղկալանավորների սեփմի վատթարացում:

Կրկին սկսվում է դաժան պայքարի շրջան՝ մարդկային տարրական իրավունքների համար:

Այդ պայքարում, վորպես վերջին միջոցի, մենք դիմում եյինք հացադուլին:

Իսկ ինչպէն եր կազմակերպվում և անց կացվում մասսայական հացադուլը:

Սովորաբար հացադուլի հարցը նախապես քննարկվում եր բոլոր քաղկալանավորների կողմից: Յերբ հարցը վճռվում եր դրական իմաստով, ընտրվում եր հացադուլային կոմիտե: Վորոշվում եր, թե ով է սկսում հացադուլն առաջին հերթին և ով է միանում նրան հետագայում՝ յերկրորդ հերթին: Կազմակերպում են կապը կոմիտեյի և մենախցում հացադուլ հայտարարած կալանավորների միջև: Իսկ յերբ հացադուլն ըսկսվել է, հացադուլային կոմիտեն լույս է ընծայում ամենորյա ամփոփազրեր՝ հացադուլի ընթացքի մասին: Այդ ամփոփազրերը տարածվում են բանտում և հանձնվում են դրսի աշխարհին՝ ՄՈՊՐ-ի սեկցիային:

Հացադուլային կոմիտեն պետք է շարունակ գզատ լինի. նա պետք է հաղթահարի հենց սաղմում հացադուլավորների միջև յեղած տատանումները. պետք է բարոյական ոգնություն ցույց տա առաջին անգամ հացադուլ հայտարարած կալանավորներին. պետք է նրանց վրա ազդի խուճրով և որինտիով: Այդ առանձնապես դժվար է այն պատճառով, վոր հատկապես հենց այդ ժամանակ է ազմինխտբացիան աշխատում բարոյալքել սահավակայուն ընկերներին:

Բանտասենյակներն են բերում համեզ բուրմուսը ունեցող կերակուրներ: Առանձին կալանավորների կանչում են խստակցելու պետերի հետ: Այնտեղ նրանց հորդորում են դադարեցնել հացադուլը, իդուր չխորտակել իրենց յերիտասարդությունը: Նրանց այն

միտքն են ներշնչում, վոր հեղափոխական կարելի չե լինել միայն ազատութեան մեջ, իսկ բանտում ի՞նչ հեղափոխութիւն: Յեւ յերբեմն նման հորդորներն ազարդյուն չեն անցնում:

Հացադուլի մասին վճիռն ընդունված է. վաղ առավոտյան բերում են թեյը, և կալանավորները բանտի պահապանի աչքի առաջ թեյը կրկին յետ են լցնում թեյամանը: Մթերքները վոչնչացվում են կամ բաժանվում են քրեյականներին կամ ուղղակի դուրս են շարվում լուսամուտից:

Առաջին որը քաղցը մտա է սողում կամաց և անհկատելի կերպով: Նա դեռ չի կարողացել տիրապետել բոլոր մտքերին և զգացմունքներին: Բայց դրա փոխարեն ծարավը չափազանց տանջալի յե: Չորանում է բերանը, և մարդ ուղում է խմել, անվերջ խմել:

Յերկրորդ որը բերում է գլխացավ: Բոլորն ել արտասովոր չափով ջղային են դառնում: Շատ են խոսում, վիճում: Ուղում են մոռացութեան տալ քաղցը:

Յերրորդ որը կապված է տարտրինակ քնկտուութեան հետ: Շատերը ծխում են ծխախոտ ծխախոտի հետեից: Թուլութիւնն է զգացվում վտառներում: Պառկում են եներգիան անտեսելու համար:

Ամենածանր որերը չորրորդ և հինգերորդ որերն են: Քաղցը բռնում է մարդու բկից: Մարդու աչքի առաջ գալիս են ֆանտաստիկ պատկերներ՝ կապված ուտելու հետ: Բանտի սե ապուրը թանգազին նուրբ խորտիկ է թվում:

Հետագայում անհայտանում է այն, ինչ սովորաբար քաղց են անվանում: Թվում է, թե որդանիզմն արդեն ընտելացել է կերակրի բացակայութեանը, բայց

միևնույն ժամանակ բոլոր շարժումները դառնում են ավելի ու ավելի թմրած, դանդաղ ու ծանր: «Ենեք-զիայի խնայողութիւնը» դառնում է իսկական լողունդ:

Հաջորդ որերին կերակրի հասկացողութեւնը յետ է քաշվում մի անսահման հեռավորութեան վրա: Քաղցը, ուտելիքը — դրանք այնպիսի բաներ են, վոր գնացել են հեռավոր անցյալը: Այդ ե՛ր յերբեմն: Այժմ քնացել է միայն մի բան... դիմանալ: Նյարդերը լարված են ծայր աստիճան: Քնել համարյա անհնարին է: Պառկած ես փակ աչքերով, նիրհում ես ու կրկին դարձնում:

15 — 20 որվա հացադուլից հետո մարդիկ դառնում են կմախքներ:

25 որ հացադուլ: Մահճակալների վրա պռակած են վոչ թե մարդկային եյակներ, այլ ուրվականներ: Ուտելիքի մատին արդեն չես մտածում: Գլխումդ միայն մի միտք է մնում՝ հաղթանակ կամ մահ:

Այժմ հետագարձ հայացք գցելով անցյալի վրա, և ստուգելով իմ կյանքը բանտում, յես պետք է խոստովանեմ, վոր մենք ամեն անգամ ել ձիշտ ու ժամանակին չենք զործարել ազմինխտբացիայի դեմ պայքարի այնպիսի սուր միջոցը, ինչպիսին է հացադուլը:

Մեր հացադուլներն աստիճանաբար սկսեցին կրել անհատական հերոսական բողոքների և յելույթների բնույթ: Մենք մոռանում եյինք, վոր քաղաքական կալանավորների համար պայքարի հնարավորութիւնները չափազանց սահմանափակ են: Յես անձամբ հաճախ յենթարկվում եյի իմ տեմպերամենտին և սկսում եյի Հացադուլ: Յես կազմակերպում եյի նաև մյուս ընկերների հացադուլները, առանց հաշվի առնելու



յերկրի ընդհանուր-քաղաքական պարագան, բանվորած  
կան շարժման թափը և ազատութեան մեջ գտնվող  
ընկերներին հետ կապի առկայութեանը կամ բացա-  
կայութեանը: Մեր կուսակցութեան զեկավարութեանը  
ժամանակին հրավիրեց մեր ուշադրութեանն այդ կող-  
մի վրա և աշխատեց ուղղել այդ սխալը, բայց մենք  
բավական չափով չողնեցինք նրան այդ գործում:

Այն հանգամանքը, վոր յես և իմ մյուս ընկեր-  
ները չեյինք գիտակցում այդ, դեռ այն ժամանակ շատ  
թանգ նստեց, իսկ շատերը քավեցին այդ իրենց կյան-  
քի գնով: Հատկապես 1924 թիվը, յերբ տեղի էյին ու-  
նենում վերը նկարագրած անցքերը, բանտային սեփի-  
մի խիստ վատթարացման տարի յեր: Այդ վատթա-  
րացումը սերտորեն կապված էր յերկրի քաղաքական  
դրութեան փոփոխման հետ: Ռումինո-լուրհրդային  
կոնֆերենցիան Բեսարաբիայի հարցի առթիվ, վոր  
տեղի յեր ունենում Վիեննայում, անհետևանք վեր-  
ջացավ: Ռումինական կոմկուսակցութեանը, վոր  
առաջադրել էր Բեսարաբիայում հանրաքվե անցկաց-  
նելու պահանջը, ստիպված յեղավ քաշվելու ընդհա-  
տակ: Արդելված էյին կոմունիստական կուսակցութեան  
սպագիր հրատարակութեանները և ամբողջ յերկրում  
տեղի էյին ունենում կոմունիստների մասսայական  
ձերբակալութեաններ: Ռումինիայում տարածվեց սպի-  
տակ տեղորի նոր ալիք:

## VII Գ Լ ՈՒ Խ

### ԱՅՈՒԿ ԹԵՎ ՏԻՐԳՈՒՈՒԿՆԱ

Մարեշ գետի աջ ափին, Ալբա-Յուլի քաղաքի  
մտակերքում գտնվում է Այուզ փոքրիկ քաղաքը:

Հեռվից, յերբ մտենում ես բանախն, թվում է  
վոր դա շրջանի բազմաթիվ կալվածատիրական զգյակ-  
ներից մեկն է: Միայն այն ժամանակ, յերբ անցնում  
ես գետի վրայի կամրջից, նկատում ես, վոր յեռհար-  
կանի առն բոլոր լուսամուտները վանդակապատ են:

Բանաը բաղկացած է մենախցերից. յուրաքան-  
չյուր հարկում կա հունգարական տիպի կարցեր: Այդ  
մութ բանտասենյակ է, վորտեղ կալանավորները պա-  
տիժը կրում են՝ շղթայված ձախ ձեռքից և աջ վոտ-  
քից:

Այուզ բանտը հատկապես հարմարեցված է կալա-  
նավորների վերջին ուժերը քամելու համար: Բանտն  
ուների հազար հեկտար սեփական հող և խաղողի այգի:  
Բանախն կից կան փոքրիկ արհեստանոցներ (ստադ-  
ձագործական, ջուլհակային, կարի, կոշիկեղենի և փա-  
կանաղործական): Բոլոր աշխատանքները կատարում  
են կալանավորները: Այդ բանտին տալիս է միլիոնի  
վաստակ: Բացի զրանից, կալանավորներին «հանձնում  
են» հարևան կալվածքներն ու կուլակային տնտեսու-  
թյունները՝ հողը մշակելու համար. զրա համար բան-  
տի զիրեկցիան ստանում է սրական 5 լեա, իսկ կա-  
լանավորները 1, 25 լեա: Արհեստանոցներում աշխա-  
տանքները կազմակերպված են անտանելի շահագործ-  
ման սիտեմով, ըստ վորում կալանավորներն իրա-  
վունք չունեն խոսել միմյանց հետ և մինչև անգամ  
բացատրվել շարժ ու ձեերով: Ով չի կատարում սրվա  
նորման, նրան զիջերով ուղարկում են կարցեր:

Այդ բանտի զիրեկտորն ու բանտային պահա-  
պանները քաղաքավարի մարդիկ են: Նրանք կալանա-  
վորների հետ խոսում են «զուք»-ով և անվանում են

«պարոն» և միայն սակաւ դեպքերում են հայնչուում: Սակայն այդ քաղաքավարութեան տակ թագնված և ավելի մեծ խտութիւն ու դաժանութիւն, քան թե մյուս բանտերում:

Վայ նրան, ով վորեւէ ձեռով խախտում է բանտի կանոնները: Այդպիսի կալանավորին անհապաղ ուղարկում են բանտի կարցերը: Բանտում ձեռն արգելված է, բայց կարցերում բանտի պահապանը հրացանի կոթով այնպես է ջարդում կալանավորին, վոր նա գտնուում է ալլանդակ մի գանգված:

Այուզում գոյութիւն ունի կալանավորներին հետամուտ լինելու հատուկ կարգ: Զրոսանքի ժամանակ բանտապահները զազանի կերպով մանրադնին խուզարկութիւն են կատարում բանտասենյակներում: Յուրաքանչյուր իր կրկին իր տեղն են դնում այնպես, վոր կարծես վոչ վոքի ձեռ չի գիպել նրան: Վատ է լինում կալանավորների գրութիւնը, յերբ նրանց մոտ վորեւէ արգելված իր են գտնում:

Այս բանտի ուժի մասին մենք լսել էլինք առաջուց: Այդ պատճառով այստեղ գալով մենք անմիջապես սկսեցինք պայքարը՝ կալանավորների հետ մարդավայել վերաբերմունքի համար:

Առաջին հերթին մենք հրաժարվեցինք ձիամարդարանում (վոքերիկ շրջանում) գրոսնելուց:

— Ինչո՞ւ, — հարցրեց մեզ վերակայուն:

— Վերովհետեւ մենք ձի չենք, — յեղավ մեր պատասխանը:

Այդ «Հանդգնութիւնը» կատարեցրեց ամբողջ ազմինխտրացիային: Մեզ վրա հարձակվեցին վերակայունները: Դրանք այստեղ մոտ հարյուր հիսուն հո-

ղի էյին, բոլորն էլ շոկովի, թոկից փախածներ: Մեզ զազանարար ձեռեցին և տարան բանտի դիրեկտորի մոտ:

Նրա հետ խոսակցութիւնը կարճատե էր, և մենք հենց այստեղ հայտարարեցինք հացադուլ: Հացադուլը շարունակվեց ութ ուր: Մեզ ազատեցին ձիամարդարանում գրոսնելուց: Մենք մեզ համար նվաճեցինք կես ժամվա փոխարեն յերկու ժամ գրոսնելու իրավունք: Մի ժամ էլ մենք ստացանք ամեն ուր ընկերների հետ տեսակցելու համար: Մեզ թույլատրվեց գրքեր պահել բանտասենյակում: Մենք իրավունք ստացանք կերակուրը պատրաստել մեր սեփական մթերքներից:

Այդպես շարունակվեց մի քանի ամիս: Բայց հետո տեսակցութիւնների առթիւ գիրեկտորի հետ բռնակվեց կոնֆլիկտ: Տեսակցութիւնները թույլատրվում էյին միայն ծնողների հետ, վորպիսիք մենք չունեինք այդտեղ: Իսկ մյուս անձնավորութիւնները տեսակցութեան չէյին թույլատրվում: Մենք նորից հայտարարեցինք հացադուլ, վորը տեւեց 14 ուր: Դիրեկտորը զիջեց, և մենք բարեկամների հետ տեսակցելու իրավունք ստացանք:

Ինձ հետ միասին բանտասենյակում նստած էր յերիտասարգ դերձակ Սուրմոն Կիմբերգը, վորը հեղափոխական պրոպագանդի համար դատապարտված էր 5 տարվա հարկադրական աշխատանքների: Դա մի լավ գիտակից ընկեր էր, վորն աչքի յեր ընկնում դեպի գիտութիւնն ունեցած մեծ ձգտումով: Նա բանտում շատ էր կարգում և ուսումնասիրում էր անգլիական լեզուն:

Քաղաքական կալանավորներն այդ բանտում կազմակերպել էին կոմունա: Այուդ բանտում մեզ առանձնապես ճնշում էր բանտասենյակների անտանելի ծանր ողբ:

Մի վորոշ ժամանակից հետո մեր ընկերներից շատերը հիվանդացան ողի պակասութունից: Մենք պահանջեցինք որվա ընթացքում հատուկ բակում արևի տակ տաքանալու իրավունքի թույլտվություն: Այդ հողի վրա սկսվեցին կոնֆլիկտներ ադմինիստրացիայի հետ:

Ինձ համարելով այդ «արևի մարտերի» (ինչպես հետագայում անվանում էինք այդ պայքարը) նախաձեռնողը, ադմինիստրացիան վորոշեց մեկուսացնել ինձ մյուս ընկերներից և տեղափոխեց մի այլ բանտ՝ «Տիրգու-Ուկնա»: Այդ բանտը նույնպես, Ուկնեկ-Մարի նման, ունի ազահանքեր: Այստեղ յես մնացի ընդամենը 26 օր և անսպասելի կերպով նորից փոխադրվեցի Դոֆտանա: Այդ այսպես յեղավ:

Ինձ հետ միասին համարյա միաժամանակ բանտն էր ժամանել նոր զիբեկտորը՝ հայանի դահիճ Մանարուն: Նրա անմիջական խնդիրն էր՝ զսպել բանտը, վորտեղ զբանից քիչ առաջ տեղի յեր ունեցել ցմահ տաժանքի դատապարտված քրեյական կալանավորների կողմից մասսայական փախուստի փորձ: Փախուստականները պահակի շղթան պատռելու համար ողտագործել էին սառը զենք ու պայթուցիկ նյութեր, վոր զործագրվում են ազահանքերում ազ արդյունահանելու համար:

Ինձ հետ միասին նստել էին ընկերներ Կլեյ-ժանն ու Կոզանը, վորոնք դատապարտված էին՝ Բեն-

զեր քաղաքի մոտ հեղափոխական զինված մարտերին մասնակցելու համար: Այստեղ նույնպես կային խոտինյան ապստամբության մասնակցողներ, և նրանց մեջ կային մարդիկ, վորոնք մեղադրվում էին իբր թե գնեբրալ Պոյտաշի<sup>1)</sup> սպանության մեջ: Այդ մարդկանց վրա բանտի նոր զիբեկտոր Մանարուն կամեցավ ազվել վոչ միայն մտրակով, այլև «քաղզրագիտությամբ»: Շարաթը մի անգամ նա հավաքում էր բոլոր բանտարկյալներին և նրանց հետ «քաղզրույց» էր անցկացնում իր սիրած թեմայի շուրջը՝ «բուշխիկներն ու իՍՀՄ»:

Նա պատմում էր ամենագաղբելի ստեր բուշխիկների և խորհրդային իշխանության մասին:

Այդպիսի զրույցներից մեկի ժամանակ յես գուրս յեկա և մերկացրի Մանարունին բոլոր ներկա գտնվողներին առաջ: Յես հայտնեցի, վոր հարկավոր է ավելի շատ հող տանել բանտարկյալների մատակարարման մասին, քան թե զբաղվել իՍՀՄ դեմ ստոր զբպարտություն տարածելով:

Ինքնըստինքյան հասկանալի յես, վոր այդ ինձ աժան չնստեց: Ինձ յենթարկեցին ձեծի և զցեցին կարցեր, իսկ հետո կրկին յես ուզարկեցին Դոֆտանա՝ «ԱՇ» սեկցիայում պատժելու համար:

#### VIII Գ Լ Ո Ւ Ե

#### ԿՐԿԻՆ ԴՈՖՏԱՆԱ ՅԵՎ ԱՅՈՒԴ

Դոֆտանայում յես անմիջապես հացադուլ հայտարարեցի, բողոքելով նրա դեմ, վոր ինձ շղթայել

1) Գնեբրալ Պոյտաշը պատժեց արշավախմբերի պետերից մեկին եր նա սպանվել էր ապստամբների դեմ մղած մարտերում

եյին կալանդներով: Յես արդեն քսան յերկու սր հացադուլ եյի անում, յերբ ինձ մոտ յեկավ գլխավոր բանտային վարչության տեսուչը: Յես պահանջեցի դատի տալ Մանարուին ինձ ձեծի յենթարկելու համար: Սոսքով ինձ այդ խոստացվեց, բայց իրոք նրա նկատմամբ վոչ մի դատ չեղավ: Ինձ ազատեցին «ԱՇ» սեկցիայից, տեղավորեցին հիվանդանոցում և բավարարեցին իմ պահանջները:

Իմ բացակայության ժամանակ Դոֆտանայի ադամինիստրացիան նոր հարածանքներ եր սկսել քաղկալանավորների դեմ, նրանցից շատերին տեղավորելով բրեյտականների հետ միասին: Յերբ յես դուրս յեկա հիվանդանոցից, մենք վճռեցինք նորից սկսել պայքարը՝ հանուն քաղաքականների համար հատուկ սեփիմի: Այդ պայքարը պսակվեց հաջողությամբ: Յերկու որվա հացադուլից հետո մեզ տեղավորեցին քաղաքականների համար ընդհանուր բանտասենյակում:

Դոֆտանայում վերջին անգամ յեղածս ժամանակ յես ծանոթացա մի ընկերոջ հետ, վորին արդարացիորեն անվանում են ուսմինական բանվորական շարժման հերոսներից մեկը: Դա Իոն Գրեչեան եր:

Իոն Գրեչեան չքավոր գյուղացու վորդի յեր: Յերբ նա կանչվեց զինվորական ծառայության, նրան ուղարկեցին ուղեգրական նավատորմը: Այնտեղ 1921 թվին ընկերներից մեկը նրան հանձնեց թոււցիկներով մի ծրար և խնդրեց տարածել այն ուղեգրական շոգհնավի նավաստիների մեջ: Իոն Գրեչեան այդպես ել արավ: Թոււցիկներում գրած եր.

«Ընկեր նավաստիներ: Զինվորի համազգեստը հագած բանվոր յեղբայրներ: Զկրակեք Կարմիր

բանակի ձեր յեղբայրների վրա, յեթե ձեզ մարտի կուղարկեն աշխարհի միակ սոցիալիստական յերկրի՝ խորհրդային Ռուսաստանի դեմ»:

Գրեչեային ձերբակալեցին, նրան ձեծի յենթարկեցին և հանձնեցին զինվորական դատարանին՝ «270-ի» դատավարության մյուս մեղադրյալները հետ միասին: Դատավարությունից առաջ Գրեչեան մեկ ու կես տարի մնաց բանտարկելության մեջ: Յեվ անա յերբեմնի հասարակ գյուղացի, նավաստի Գրեչեան զինվորական դատարանում արտասանեց իր սքանչելի ճառը.

«Յերբ յես բանտն ընկա, յես չգիտեյի, թե ի՞նչ ե սոցիալիզմ և ի՞նչ ե կոմունիզմ: Իմ ծնողները միշտ ել աշխատել են քրտինքը ձակատաներին՝ բոյարների դաշտերում: Այդ քրտինքը հնչուն վոսկի յեր դառնում կալվածատերերի համար: Յեվ այնուամենայնիվ յես կարծում եյի, վոր այդ այդպես ել պետք ե լինի, և աշխատում եյի բոյարների համար նույնպես, ինչպես իմ ծնողները, ինչպես իմ յեղբայրներն ու քույրերը: Այնուհետև յես ընկա զինվորական ծառայության մեջ և ապա՝ բանտ: Բանտում մարդիկ, վորոնք իրենց կոմունիստներ եյին անվանում, ինձ գրել ու կարգալ սովորեցրին: Նրանք պատմեցին ինձ, թե ինչի համար են պայքարում կոմունիստները, և յես տեսա, վոր այդ մեծ գործ ե: Այստոր ձեր առաջ կանգնած ե գիտակից մարդ: Այդ պատճառով յես այստեղ բարձրաձայն հայտարարում եմ. ուսմինական ժողովրդի յուրաքանչյուր գավակ, յուրաքանչյուր բանվոր ու գյուղացի, յուրաքանչյուր զինվոր ու արհեստավոր պետք ե համախմբվեն կո-

մունիստական կուսակցութեան շուրջը, ջախջախեալ  
շահագործողներին և հաստատեն աշխատավորների  
իշխանութունը»:

Գրեչեան դատապարտուեց 5 տարվա հարկադրա-  
կան աշխատանքի: Բայց Ռուսիայի կառավարելիները  
չբավարարվեցին դրանով: Նախքան Գրեչեան ընկնելը  
Գրեչեան յենթարկվեց սոսկալի խոշտանգման ու տան-  
ջանքների: Փորձեցին նրան գնդակահարել «փախուս-  
տի փորձ կատարելիս»: Կալանավորներից մեկի աչա-  
լըջութեան շնորհիվ այդ պլանը չհաջողվեց:

Բանտում համարյա ամբողջ ժամանակ Իոնն ըզ-  
բաղված էր ուսուցումով: Նա արիութեամբ մասնակ-  
ցում էր մեր պայքարին: Նրան մյուսներից ավելի  
հաճախ էլին ուղարկում «ԱՇ» սեկցիան: Յերբ նա  
փորձում էր դիմադրել, նրան յերկու ամսով զցում  
էլին կարգեր: Գրեչեան սկսեց հացադուլ, վորը տեց  
28 օր:

Կարցերի ցուրտն ու խոնավութեանը և յերկա-  
րատե հացադուլն այն հետեանքն ունեցան, վոր Իոն  
Գրեչեան հիվանդացավ կոկորդի հյուծախտով:

Մենք սիրով խնամում էլինք նրան և ինչ հնա-  
րավոր էր, անում էլինք նրա վիճակը թեթևացնելու  
համար: Չնայած հիվանդութեանը, Գրեչեան անձնատուր  
չէր լինում, չէր ընկճվում և մինչև անգամ շարունա-  
կում էր վարել մեր բանտային տնտեսութեանը:

Այժմ Գրեչեան ազատ է և գտնվում է Սորերգային  
Միութեանում, վորտեղ շրջապատված է ՄՈՊՐ-ի հա-  
տուկ ուղարկութեամբ: Ընկեր Իոն Գրեչեան զեռես հի-  
վանդ է կոկորդի ծանր ձևի հյուծախտով: Այդ հիվանդու-  
թեան հետեանքով միանգամայն խզված է նրա ձայնը:

Այդ ժամանակներում սկսեցին Գրեչեան գալ  
քաղկալանավորների նոր խմբեր: Այդ խմբերից ամե-  
նախոշորը՝ բաղկացած 32 հոգուց, կազմում էլին գյու-  
ղացիները, վորոնք բանտարկութեան էլին դատա-  
պարտվել Թաթարուհարի ապստամբութեանը մասնակ-  
ցելու համար: Այդ գործով արդեն դատապարտված էր  
մոտ 800 հոգի՝ ընկ. Բատիշևի գլխավորութեամբ:

Մեր առաջ խնդիր էր դրված՝ չթուլատրել, վոր  
նորեկներին տեղավորեն քրեյականների հետ միասին:  
Բայց դրա համար հարկավոր էր ազատել մի շարք  
բանտասենյակներ, տեղափոխելով քրեյականներին մի  
այլ տեղ: Ադմինիստրացիան շատ մեծ դժկամութեամբ  
էր համաձայնում այդ անել:

Նորեկ Թաթարուհարցիներին մեջ կային սքան-  
չելի մարդիկ ու հեղափոխականներ: Յեվ դրանցից  
առաջինն էր 60-ամյա ատաղձագործ ընկ. Բատիշևը:

Ապստամբութեան ժամանակ նա խորհուրդներին  
գլուխ էր կանգնել և ապահովել կարգ ու կանոնը:  
Դատարանի դահլիճում, անողոր զինվորական դատա-  
վորների ներկայութեամբ, նա տվել էր բռնութեան ու  
տեղորի այն ռեժիմի ցնցող պատկերը, վորը հասցը-  
րել էր ապստամբութեան: Նա դատապարտված էր յեր-  
կարատե հարկադրական աշխատանքների: Բանտում  
ընկ. Բատիշևն իրեն պահում էր վորպես իսկական  
տոկուն հեղափոխական:

Այստեղ էր նաև մեր սքանչելի ընկեր Լիսովոյը,  
նույնպես ապստամբութեան զեկավարներից մեկը: Լի-  
սովոյ գյուղացու զավակ՝ նա իմպերիալիստական պա-  
տերագին անց էր կացրել հեծյալ զիվիզիաններից մե-

կում: Պատերազմից հետո յեկեկ եր Թաթարբունար, վորտեղ ապրում եր ծանր աշխատանք թափելով փոքրիկ կտոր հողի վրա:

Ընկեր Լիսովոյը տեսնում ե իր յերկրում իշխող կամայականությունն ու ճնշումը և դառնում ե անլեզալ «հեղափոխական գյուղացիների միության» անդամ: Նա դրազվում ե ազիտացիոն աշխատանքով և վարում ե գյուղացիների մոտ թաղցրած զենքի հաշվատումը: Ապստամբության ժամանակ նա զեկավարում ե հեծյալ ջոկատ և զերի յե վերջվում կատաղի կովից հետո:

Ընկ. Լիսովոյը բանտում մեծ սեր ցույց ավեց զեպի ուսուցումը: Նրան առանձնապես հեռաքրքրում եր հեղափոխական շարժման պատմությունը: Նա մեր դասընթացներում լավագույն աշակերտն եր:

1929 թիվը մեզ համար բերեց չափազանց ծանր օրեր: 1927 թվից մեր բանտում գտնվում եր Սեմիգրադեյից մի յերիտասարդ ընկեր՝ Ֆոնազի անունով, վորը ոււմինական կոմյերիտմիության զեկավարներից մեկն եր: Նա ձերբակալվել եր Սեմիգրադեյի մայրաքաղաքում՝ Կլուժե քաղաքում, դատից հետո փորձել եր փախչել և այդ ժամանակ ծանր վիրավորվել եր:

Ֆոնազին արտասովոր անձնվիրությամբ բանտում նվիրվեց լուսավորական աշխատանքին: Չնայած նրան, վոր նա վատ եր խոսում ոււմիներեն, նա ընկերներին հետ մշակում եր Մարքսի «Կապիտալը»: Նա իրեն ցուցաբերեց վորպես մեր կոմունայի լավագույն կազմակերպիչը: Իր վերաբերմունքի մեջ համբերող ու սիրալիք՝ նա բոլոր քաղաքական կալանավորների սիրելին եր:

Այդ ընկերը տառապում եր ստամոքսի ծանր հիվանդությամբ. 1929 թվի սկզբներում բանտային կերակրից նրա հիվանդությունը սուր ընույթ ստացավ: Մեր պահանջով Ֆոնազին ուղարկվեց քաղաքային հիվանդանոցը, բայց հիվանդանոցի ճանապարհին մեռավ:

Ընկերոջ մահը մեծ անցքերի սկիզբ ծառայեց, վորոնք տեղի ունեցան թե բանտում և թե բանտից դուրս:

Մեզ հաջողվեց բանտի գերեկատրից մի վկայական ստանալ այն մասին, վոր Ֆոնազին մեռել ե հիվանդանոցում: Դրա հիման վրա Ֆոնազիի կնոջը թույլատրեցին փոխադրել նրա մարմինը և Տեմիշուար քաղաքում կազմակերպել թաղումը: Այստեղ Ֆոնազիի զազաղը զբվեց բանվորական տունը, վորտեղ այդ ժամանակ տեղի յեր ունենում պրոֆմիությունների կոնգրեսը: Դեպի զազազն սկսվեց իսկական ուխտագնացություն, վորն սպառնում եր վերածվելու հակակառավարական ցույցի:

Իմանալով այդ մասին՝ ներքին գործոց մինիստրն այնտեղ զինվորական մաս ուղարկեց, հրամայելով բանվորներից ուժով խլել զիսկը: Ընկ. Ֆոնազիի մարմինը բառացիորեն մի բանի անգամ ձեռքից ձեռք եր անցնում:

Վոստիկանությանն այնուամենայնիվ հաջողվեց զրավել զիսկը: Բայց ընկեր Ֆոնազիի գերեզմանը մինչև այժմ ամեն տարի այցելում ե բանվորական յերիտասարդությունը, վորը հարգում ե Սեմիգրադեյի բանվորական շարժման այդ առաջավոր մարտիկի հիշատակը:

Դոփտանայի բանտային ադմինիստրացիան այդ պատմութեան համար տուժեց: Յեկ նա իր հերթին վրեժխնդիր յեղավ մեզանից: Մեզանից խլեցին մեր բոլոր «արտոնութեանները»: Նոր պայքար բռնկվեց: Մենք սկսեցինք հացադուլ, վորը տեղեց քառասուն ուր, և այդ մեր յերկու ընկերներին՝ Լիսովոյի ու Շմատովի մահվան պատճառ դարձավ: Նրանք մեռան հացադուլի ժամանակ:

Մեզ առանձնապես ցնցեց ընկ. Լիսովոյի մահը: Մեռնելուց առաջ նրան փոխադրեցին հիվանդանոց, վորտեղ ինձ հաջողվեց նրան այցելել: Նրա վերջին խոսքերն էին Սորհրդային Միութեան մասին՝ «Մեր թանգազին հայրենիք. վորքան կուզեյի մի անգամ ևս տեսնել նրան»:

Ընկ. Լիսովոյը մեծ սիրով եր հիշում նաև իր յերեսայի մասին և ցանկութեան հայտնեց, վոր նրան զատարակեն Սորհրդային Միութեան մեջ: Մեր ընկերներն իրենց ձեռքով զագաղ շինեցին իրենց զոհված ընկերով աճյունի համար: Մենք զագաղի վրա գրինք մի հասարակ պտակ, և մեր պահանջով թուլատրեցին, վոր մեր մեռած ընկերը յերեք ուրով մնա մեր ընդհանուր բանտասենյակում: Մենք կազմակերպեցինք սգո ժողով, վորտեղ մեծարեցինք ընկ. Լիսովոյի հեղափոխական արիութեանն ու տոկունութեանը: Սգո քայլերգի և «Ինտերնացիոնալի» յերգի տակ մենք տարանք զագաղը դեպի գերեզմանատուն՝ մինչև դարպասները:

Նրա գերեզմանի վրա մենք կանգնեցրինք հուշարձան, վորը բանտային ադմինիստրացիան հանել ու ջարդել եր: Բայց այդ քաջարի մարտիկի հիշատակը վոչ վոք չի կարող պոկել մեր սրտից:

1930 թվին մեզ մոտ բազմաթիվ միջադեպեր յեղան գրքերի պատճառով, վոր մենք մեծ դժվարութեամբ էյինք ձեռք բերում և ադմինիստրացիան իբրում եր մեզանից: Շարունակ հարկավոր եր լինում պայքարել նույնպես այն բանի դեմ, վոր յուրաքանչյուր նորեկ քաղաքական կալանավորին ադմինիստրացիան նստեցնում եր «ԱՇ» սեկցիան:

1931 թվի ձմռանն այդ հողի վրա տեղի ունեցան լուրջ անցքեր. մի ուրիշ բանտից մեզ մոտ յեկավ մի ընկեր, վորն ստացել եր «ԱՇ» սեկցիայում 20 ուրվարանտարկութեան: Ադմինիստրացիան չհամարձակվեց նրան վերցնել ցերեկով: Նրան բանտասենյակից դուրս կանչեցին զիշերով, շղթայեցին ձեռքի ու վոտքի կալանգնեցրով և զցեցին «ԱՇ» սեկցիայի «գերլերեց» մեկը: Յերբ այդ լուրը մեզ հասավ, մենք անմիջապես սկսեցինք բողոքել: Սովորական զրոսանքից հետո մենք հրաժարվեցինք վերադառնալ բանտասենյակները: Մենք հայտարարեցինք, վոր այնտեղ չենք գնա, մինչև վոր մեր ընկերը չազատվի: Այսպես անցավ ամբողջ մի ուր: Յեկավ բանտային գլխավոր վարչութեան ներկայացուցիչը: Նա խոստացավ, վոր մեր պահանջը կրավարարվի և առաջարկեց մեզ գնալ բանտասենյակները: Մենք դրան չենթարկվեցինք, պահանջելով անմիջապես ընկերովն ազատել «գերլերեց»:

Յեկ մենք հաղթեցինք: «Ինտերնացիոնալ» յերգելով մենք զիմավորեցինք ազատված ընկերովը և նրա հետ միասին մտանք բանտասենյակները:

Հաջորդ ուրն ադմինիստրացիան վճուց հաշիվները մաքրել մեզ հետ: Յերբ հասավ զրոսանքի ժամը, բանտասենյակները շարունակեցին մնալ փակված: Մեզ

բայ չէյն թողնում: Մենք սկսեցինք բաղխել դոճերը, պահանջելով կանչել դիրեկտորին: Գիրեկտորը չեկավ: Ազմունի Աճում եր: Ազմինիստրացիան վորոշեց ոգալը վել այդ մոմենտից «բանտում բունտ» հայտարարելու համար: Բանտապահներից մեկն սկսեց ջարդել բանտասենյակների դոճերի փականները: Մենք հասկացանք, վոր զործն այնպես են պատկերացնելու, թե իբր մենք ինքներս ենք ջարդել փականները: Իսկ այդ արդեն անմիջական առիթ եր մեր դեմ կրակելու համար: Այդպես ել յեղավ: Յեկան զինվորները, սկըսվեց հրաձգությունը... Մենք բոլորս պառկեցինք հատակի վրա: Միայն շնորհիվ այդ նախագրու շացման, մեր կողմից սպանվածներ չեղան:

Գրանից հետո մեզ մոտ ներս խուժեցին վերակացուները, սկսեցին մեզ մեկ-մեկ բարչ տալ բանտասենյակներից և անցկացրին մեզ բանտապահների շարքից, վորոճք դազանարար ձեծում եյին մեզ: Շղթայված ձեռքի ու վոտքի կալանդներով՝ մեզ, չնայած սոսկալի սառնամանիքներին, յերեսնիվար գցեցին ձյունի վրա: Իսկ հետո բոլորիս ուղարկեցին «ԱՇ» սեկցիան:

Այստեղ մենք մնացինք մոտ յերկու շարաթ: Մենք 43 հոգի եյինք: Շնորհիվ մեր կազմակերպվածության, ազմինիստրացիային չհաջողվեց մեզ կոտրել: Մենք հացադուլ հայտարարեցինք, պահանջելով կանչել քննչական հանձնաժողով: Միևնույն ժամանակ ամբողջ տեղի ունեցածի մասին մենք հայանեցինք զուրք:

Հացադուլի մասսայական բնույթը, բանտի ազմինիստրացիայի կողմից պրովոկացիա անելու փորձը հասարակական կարծիքի հակայական վրդովմունք

առաջացրին: ՄՈՊՐ-ը և բանվորական մամուլն սկսեցին մերկացուցիչ լայն կամպանիա:

Յեկավ քննչական հանձնաժողովը: Ազմինիստրացիայի դեմ հանցանշաններն այնքան սպանիչ եյին, վոր մեր դեմ վոչ միայն վոչ մի դատավարություն չսկսեցին, այլև բավարարեցին մեր պահանջները:

Բայց սխալ կլինեք կարծել, թե մենք յերկար ժամանակով դազար ստացանք: Ազմինիստրացիան սովորաբար ոգտազործում եր իր համար յուրաքանչյուր հարմար առիթ, վորպեսզի նոր արչավ սկսի մեր դեմ: Այդպես եր 1933 թվին յերկաթուղայինների հոչակավոր յելույթից հետո <sup>1)</sup>: Այն ժամանակ ամբողջ յեր-

1) 1933 թվի փետրվարի 5-ին հեղափոխական պրոֆմիության ղեկավարությամբ, ուսմինական յերկաթուղայինները, ինըշան աշխատավարձի նոր իջեցման դեմ բողոքել, հայտարարեցին գործադուլ: Փետրվարի 10-ին ուսմինական կառավարությունը հրաման արձակեց գործադուլավորների պահանջների մասնակի բավարարման մասին: Գործադուլը դադարեց: Նույն զիշերն իսկ սկսվեց դատաստանը: Բուխարեստի յերկաթուղայինները տեռորին պատասխանեցին նոր գործադուլով, վորը զուտ քաղաքական բնույթ եր կրում:

Գործադուլային շարժումն ուղեկցվում եր գործադուլավորների և զորքերի ու վոտտիկաության սիջե տեղի ունեցող բազմաթիվ լնդհարումների հետ: Մարտերն առանձնապես կատաղի եյին յերկաթուղային արհեստանոցներում, վորտեղ գործադուլավորները բարիկազավորվել եյին: Այդ ժամանակ սպանվեց 400 բանվոր, 2 հազար հոգի ձերբակալվեցին և սիլուրանցայի զընդաններում յենթարկվեցին տանջանքների:

Այդ անցքերը և յերկաթուղայինների գործադուլի ղեկավարների հետագա դատավարությունները համերաշխության հուժկու շարժման ազդակ հանդիսացան յերկրում և յերկրից զուրս:



Յիբը հայտարարված էր պաշարողական դրուժյան մեջ: Այդ չափազանց հարմար մոմենտ էր բանտարկյալներին սանձահարելու համար:

Ադմինիստրացիայի կողմից սկսվեցին անվերջ պրովոկացիաներ: Բայց մենք բավականաչափ լավ էլինք կազմակերպված և վոչ մի թակարդ չընկանք: Սակայն մայիսին մթնուլորտն առանձնապես լժանձրացավ: Մեզ զրկեցին մեր հիվանդ ընկերները համար մեր ձեռքով կերակուր պատրաստելու իրավունքից: Մենք վճռահանապես բողոքեցինք և հրաժարվեցինք բանտասենյակները գնալուց ու ամբողջ գիշեր անց կացրինք միջանցքներում:

Մյուս ուրը բանտը յեկան ժանդարմները: Չորս կողմը շարեցին գնդացիներ և սկսեցին գնդակոծել բանտասենյակները: Մի քանի ընկեր վիրավորվեց:

Այդ դարձյալ անդրադարձավ իմ վիճակի վրա: Մի քանի օրից հետո ինձ յերկու ընկերով հետ միասին կանչեցին գրասենյակ, իբր թե փաստաբանի հետ տեսակցելու համար: Այստեղ մեզ շղթայեցին և այնպես դաժանորեն ձեծեցին, վոր մեզ գուրս բերին ձեռների վրա: Այդպիսի դրուժյամբ մեզ կրկին ուղարկեցին Այուդ:

Այուդում մեզ զրկեցին զբոսանքներից, անկողնից և զբսից իբեր ստանալու իրավունքից: Տաք կերակուր մենք ստանում էինք շաբաթական 3 անգամ միայն:

Ինձ միանգամայն մեկուսացրին ֆնացած քաղկալանավորներից: Այն ժամանակ յես հայտարարեցի հացադուլ, վորը տեեց քառասուն օր: Յերեսունվեցերորդ օրն իմ ընկերները, վորոնք գաղարել էին իմ մասին

տեղեկություններ ստանալ, բանտից զբսի ընկերներին հաղորդագրուժյուն ուղարկեցին իմ մասվան մասին: Նրանք չգիտեցին, վոր ինձ զիշերվա ժամի Ձ-ին գուրս էյին բերել բանտից և պահում էյին բարակներից մեկում:

Ադմինիստրացիան ստիպված յեղավ բավարարելու իմ պահանջների մի մասը: Ինձ թույլատրեցին բանտասենյակում գրքեր պահել և հնարավորություն տվին բժշկվելու: Յես կերակուրն ստանում էյի զբսից: Բայց զբոսանքներից ու տեսակցություններից յես զրկված էյի 8 ամիս: Կալանավոր ընկերներիցս նույնպես յես մեկուսացված էյի: Սակայն հետագայում ինձ հաջողեց կապ հաստատել նրանց հետ և մենք կազմակերպեցինք միտեղ բողոք: Դրա հետևանքով մեզ բսլսրիս ել տեղավորեցին ընդհանուր բանտասենյակում: Այսպես յես անցկացրի ժամանակս մինչև բանտից ազատվելուս մոմենտը:

## IX Գ Լ Ո Ւ Խ

### ՎԵՐՋԻՆ ՏԵՌԱՊԱՆՔՆԵՐ

1934 թվի զեկտեմբերին լրանում էր իմ ազատվելու ժամկետը: Ինձ ուղարկեցին զլիսավոր սիգուրանցան՝ Բուխարեստում: Յես պահանջեցի, վոր ինձ ազատեն հենց այդտեղից: Բայց սիգուրանցայի պետ վիետրիա Իոնեսկուն կարականապես մերժեց:

— Ձեզ այստեղ շատ լավ են ճանաչում բանվորները, — ասաց նա, — դուք առանց այդ ել քիչ անախորժություններ չպատճառեցիք մեզ: Մենք չենք հանդուրժի, վոր ձեր վտաքը ֆնա ուսմինական տերիտորիայում:

Այն ժամանակ յես պահանջեցի, վոր ինձ ուղարկեն Խորհրդային Միութիւն: Վինտրլա Իոնեսկուն խոստացավ ապահովել ԽՍՀՄ անցնելս Վարշավայի վրայով:

Սակայն սիգուրանցան հեշտությամբ չի բաժանվում իր գոհից: Ինչպէս հետո պարզվեց, նա իմ դեմ ծրագրել էր մի զազրելի պլան:

Բուխարեստից ինձ ուղարկեցին Չերնովիցի, այնտեղից յես պետք է գնայի դեպի լեհական սահմանը: Այստեղ յես յերեք ուր մնացի վոստիկանատանը, վորտեղ ինձ հայտնեցին, վոր իմ փաստաթղթերը միանգամայն կարգին են: Այնուհետե ինձ ուղարկեցին Գիլա-Վոզա սահմանակետը, վորտեղ յես պետք է գննության յենթարկվեյի մաքսատանը:

Բայց իրոք յես ընկա վոչ թե մաքսատուն, այլ սահմանագլխի պոստը: Պոստի կապիտանն անձամբ խուզարկեց ինձ և ապա ինձ հետ դրեց մի վախժիստը և յերկու դինվոր: Նրանք ինձ տարան մոտակա անտառը: Գիշեր եր:

Վախժիստըը խլեց իմ բոլոր փաստաթղթերը և պատռոտեց: Իսկ հետո առաջարկեց ինձ անցնել սահմանը: Յերբ յես հրաժարվեցի այդ անել, նա ինձ հայտնեց, վոր ինքը հանձնարարութիւն ունի ձանապարհին ինձ «կորցնելու»:

— Յեթե դուք ձեր կամքով չցանկանաք անցնել սահմանը, յես ստիպված կլինեմ ձեզ գնդակահարել, — վերջացրեց նա:

Յես հասկացաւ ինձ ուղում են սպանել լեհական սահմանապահների ձեռքով: Բայց ընտրութիւն չկար:

Յես փորձեցի բողոքել, բայց հրացանի կոթով հարված ստացա թիկունքից:

Յեկ յես անցա լեհական սահմանն անլեզալ ձեռով...

Բարեբախտաբար լեհական սահմանապահները չնկատեցին ինձ: Առանց իմանալու, թե ուր եմ գնում, անցնելով մոտ 5 կիլոմետր, յես ընկա լեհական սահմանամերձ Սնյատին ավանը:

Ուր գնալ, առանց իմանալու լեհական լեզուն և առանց լեհական վալյուտայի:

Յես մոտեցա մի անակի: Բաղխեցի: Ինձ ներս թողին:

Յես առաջարկեցի տանախրոջը լեհական վալյուտայով փոխանակել Բուխարեստում ՄՈՊՐ-ի կազմակերպութիւնից ստացածս 2500 լեան:

Տանախրո գուրս գնաց և յես պառկեցի հանգրտանալու: Մի յերկու ժամից հետո նա ինձ բերավ 16 գլխի<sup>1)</sup>: Այդ գործարքը բացահայտ կերպով անշահավետ եր ինձ համար, բայց յես մի այլ ընտրութիւն չունեցի:

Յես ձգտում էյի վորքան կարելի յե շուտ հեռանալ սահմանից: Յես ընտրեցի Կոլումեա քաղաքը, վորը Սնյատինից գտնվում եր 40 կիլոմետր հեռու: Այնտեղ յես հասա վարձած սայլով: Սակայն առանց փաստաթղթերի յես վոչ մի տեղ չէյի կարողանում սթիան գտնել ինձ համար: Յես գնացի մի դերձակի մոտ և ուզեցի աշխատելու վարձվել նրա մոտ: Բայց նա նույնպէս ինձանից փաստաթղթեր պահանջեց:

<sup>1)</sup> Զլտին հավասար է մոտ 97 կոպեկի:

Դերձակի մտ յես ուշադրություն զարձրի մի յերիտասարգ բանվորի վրա, վորը, չգիտեմ ինչու, զուր յեկավ ինձ: Փողոցում սպասելով մինչև աշխատանքը վերջանալը, յես դիմեցի զուրս յեկած յերիտասարգին, խնդրելով նրան ինձ սթեան տալ: Բայց նա վախեցավ ինձ պատասպարել ատանց փաստաթղթերի:

— Սակայն, — ասաց նա, — յես կարող եմ ձեզ տեղավորել մուրացիկանների ապաստարանում: Կասեմ, վոր ձեր փաստաթղթերը մնացել են իմ ախրոջ մտ, վորի մտ զուր իրր թե աշխատանքի յեր անցի:

Յես համաձայնեցի: Մուրացիկանների ապաստարանում յես մնացի յերեք օր: Հետագրեցի Բուխարեստ, վոր ինձ փող ուղարկեն Վարչափա մեկնելու համար: Բայց պատահեց անսպասելի փորձանք: Ապաստարանը ներխուժեց վտտիկանական շուրջիկալ: Յես ուզեցի ծլկել, բայց ինձ հասան ու բռնեցին: Բերին վտտիկանատուն:

— Ո՞վ էք զուր, — հարցնում են ինձ:

— Ինձ բռնի կերպով ստիպել են անցնել սամի-նուլեհական սահմանը:

Անձնավորությունս պարզելու համար ինձ ուղարկեցին գլխավոր վտտիկանատունը: Այնտեղ արձանագրություն կազմեցին և ուղարկեցին գատավորին: Ինձ պետք է զատելին ինքնակամ կերպով սահմանն անցնելու համար:

Դատավորը կարգադրեց ինձ ուղարկել Մնչախին՝ «անձնավորությունը պարզելու համար»: Յես պահանջեցի, վոր իմ կախնքի մասին հայտենն խորհրդային հյուպատոսին: Բայց ինձ պատասխանեցին, վոր զեսևս

պետք է անգեկություններ հավաքել Ռումինիայում, թե արգյո՞ք յես փախած քրեյական հանցադորձ չեմ:

Իսկ մինչ այդ ինձ կրկին բանտ նստեցրին, վորտեղ յես մնացի 20 օր: Այդ ժամանակամիջոցում ինձ հաջողեց անդեղալ կերպով կապվել ՄՈՊՐ-ի Բուխարեստի կազմակերպության հետ և ստանալ փաստաթղթեր ու զբամ:

Կայացավ գտար, վորը վճռեց ինձ նորից Ռումինիա վերագարձնել: Այն ժամանակ յես հայտարարեցի իմ վերջին հացադուրը, վորը տեղեց 10 օր: Յես զգուշացրի վտտիկանությանը, վոր յեթե ինձ ցանկանան բռնի կերպով տեղափոխել Ռումինիա, յես փողոցներով անցնելիս պետք է զոչեմ, վոր ինձ տանում են գնդակահարելու: Յերեք անգամ զիշերով փորձեցին ինձ զուրս բերել բանտից, բայց յես սկսում էյի գոռալ և սղնության կանչել: Վերջապես՝ ներքին զործոց մինիստրից կարգադրություն ստացվեց ինձ տեղավորել խորհրդային տերիտորիան: Այդ սահմանը նույնպես յես անցա անդեղալ կերպով:

Յեւ ահա — օ, ուրախություն: Յես հայրենի տերիտորիայումն եմ: Ահա նրանք — սիրելի, հաբապա կարմիր սահմանադահները:

Յես ինձ կրկին զգացի իմ յուրայինների հետ:

Իսկ հետո՝ Մոսկվան: Բարեկամների ու պայքարի զինակիցների զրկախաճություններ: Հանդիտա և աշխատանք սոցիալիստական հայրենիքում: Ինչպիսի հսկայական յերջանկություն և այդ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I	Գլուխ: Ընդհանուր գործադուր Դատ ու դատախօս	9
II	» Ոկնելե-Մարի տաժանակրական բանտում	12
III	» Վահարեշտ	25
IV	» Նախկին վայրում	31
V	» Դոֆտանայի կազեմասներում	34
VI	» Հացադուր	39
VII	» Այուդ և Տիբզու-Ոկնա	46
VIII	» Կրկին Դոֆտանա և Այուդ	51
IX	» Վերջին տառադանքներ	63



Պատ. խմբագրի՝ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Տեխ. խմբագրի՝ Լ. ՈՂԱՆՅԱՆ  
Սրբագրիչ՝ ԳԱՐ. ՀԱԿՈՐՅԱՆ  
Կոնտրոլ սրբագրելի՝ Մ. ՄԱՐՏԻԿՅԱՆ

Գլավիտի լրագրի՝ Դ.—3609 Հրատ. № 4513  
Պատվեր 182. Տիրած 3000  
Թուղթ 72 × 105 Տպագր. 4<sup>3</sup>/<sub>10</sub> մամ.  
Մեկ մամ. 25600<sup>2</sup> նշան. Հեղինակ. 2<sup>1</sup>/<sub>4</sub> մամ.  
Հանձնված է արտագրության 17 փետրվարի 1938 թ.  
Ստորագրված է տպագրության համար 4 ապրիլի 1938 թ.  
ԳԻՆԸ 70 Կ

НАМЧАЕ  
т е т  
ЗАСЕДЕНИЯ И ТЮРМАХ  
Румыния  
Апр. ССР Европа 1938 г.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0422789

ԳԻՆԸ 70 Կ.

225

17804

Я. БЕРМАН  
14 Л е т  
В застенках и тюрьмах  
Румынии  
Гиз Арм. ССР Ереван, 1938 г.